

# ሀላግ ግንባር

አሁን


ሙረካዊ

ጠገራ ግንባር ግንባር  
ጠገራ ግንባር ግንባር

marzig

SPORTS MAGAZINE

31ግን ግንባር, 2012, ግንባር 4 (358) - VOL. XXXI N° 4 ግንባር ግንባር ግንባር



# ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ՝ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

**Յ**.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ Յ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան կազմակերպութեամբ, 3-11 Օգոստոս 2012-ին, Բիւրականի մէջ տեղի կ'ունենայ հայ սկաուտութեան 100-ամեակին նուիրուած միջազգային բանակում, որուն մասնակցութեան հրաւիրուած են հայկական սկաուտական այլ միութիւններ, նախկին և Միութեան երկիրներու եւ եւրոպական երկիրներու ըսկաուտական միութիւններ:



թիւնը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի: Հրաւիրուած են Համաշխարհային Սկաուտական Շարժման գլխաւոր քարտուղարն ու կոմիտեութեան անդամները:

Բանակումին կրնան մասնակցիլ 14-22 տարեկան սկաուտներ աշխարհի չորս ծագերէն: Մասնակցութեան սակ ծշդուած է 200 եւրօ: Յայտագրի վրայ նախատեսուած են Ս. Էջմիածին եւ Ծիծեռնակաբերդ այցելութիւններ, արշաւ դէպի Ամբերդ, միջ-մշակութային երեկոյ եւ ռալի: 7 Օգոստոսը հռչակուած է «Սկաուտի օր»:

Բանակումը իր տեսակին մէջ աննախընթաց ըլլալով՝ ներառնուած է Համաշխարհային Սկաուտական Շարժման ձեռնարկներու շարքին:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է այցելել կազմակերպիչ Յ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կայք էջ՝ [www.scout.am/jamboree2012](http://www.scout.am/jamboree2012)

Բանակումը կը վայելէ բարձր հովանաւորու-

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԷՆ ԿԸ ՔՆՆԷ ԶՄԵՌՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ

**P**anArmenian.Net լրատուական կայքէջը կը հաղորդէ, որ վերջերս Վիեննայի Հայաստանի դեսպանատան մէջ տեղի ունեցած է Համահայկական Խաղերու Համաշխարհա-

յին Կոմիտէին նիստը, զոր վարած են կազմակերպութեան փոխ նախագահ Ալպէրթ Պոյաճեան եւ Բագրատ Պուռնազեան: Մասնակցողներուն կարգին եղած են աշխարհի աւելի քան 20 քա-

ղաքներ ներկայացնող Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի գործադիր մարմնի անդամներ:

Նիստին մասնակցողները քննարկած են օրակարգի վրայ եղող շարք մը հարցեր, մասնաւորաբար Համահայկական ձմեռնային խաղեր կազմակերպելու կարելիութիւնը, ամառնային խաղերուն մէջ նոր մարզաձեւեր նկատի ունենալու, խաղերու կիրարկման աշխարհագրութիւնը ընդլայնելու, Երեւանի մէջ խաղերու գրասենեակ մը ստեղծելու եւ կազմակերպչական այլ հարցեր: Խօսքեր արտասանած են Աւստրիոյ մէջ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան, Մխիթարեան միաբանութեան Վիեննայի մասնաճիւղի հոգեւոր առաջնորդ Հ. Պօղոս Գոճանեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Աւստրիոյ հոգեւոր առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեան, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի գործադիր մարմնի փոխ նախագահներ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Ալպէրթ Պոյաճեան եւ ուրիշներ:

Այս առիթով, նիստին մասնակցողները այցելած են Վիեննայի Մխիթարեան միաբանութեան կեդրոնը:

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ բոլոր Հ.Ս.Ը.Մ.ականներու անունով կը շնորհաւորէ եղբ. Յակոբ Խաչերեանի Ասիոյ պասքեթպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղարի ընտրութիւնը: Եղբ. Խաչերեան իր նոր պաշտօնը ստանձնելով ուղղակիօրէն մաս պիտի կազմէ ՖԻՊԱ-ին, կարելոր իրագործում մը՝ պասքեթպոլի համաշխարհային մակարդակի վրայ: Եղբ. Խաչերեանի ընտրութիւնը, անկասկած, որ կարելոր իրագործում մըն է նաեւ Հ.Ս.Ը.Մ.ական մակարդակի վրայ, որ հպարտօրէն կը դիմաւորուի բոլոր Հ.Ս.Ը.Մ.ականներու կողմէ:



Եղբ. Յակոբ Խաչերեան մաս կը կազմէ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին: Ան եղած է մարզիկ, մարզիչ, ինչպէս նաեւ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: Ան երկարամեայ վաստակաշատ ծառայութիւն ունի Հ.Ս.Ը.Մ.ի եւ Լիբանանի մարզական բնագաւառներուն:


Ջերմ շնորհաւորութիւններ եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներ եղբ. Խաչերեանին:

Հ.Ս.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضیه شهریه تصد رهسا جمعیه الموشتمن الریاضی



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31 ՐԴ ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 4 (358)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիգեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Սեդա Պէշեան (Լիբանան),  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս  
 Պողարեան, Աբօ Մոսիկեան  
 (Լիբանան), Յարութ Մատենլեան  
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),  
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Seperation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրժ Հանուտ, ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

### ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծշդուած է 48000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



3

### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ


- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Անդրադարձ 8
- Մեր Տեսակցութիւնները 14
- Պատմութիւն 16
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 20
- Մեր Կորուստները 37



24

### ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 18
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



28



34



Խ  
Ն  
Մ  
Բ  
Ա  
Գ  
Ր  
Ա  
Կ  
Կ  
Ն  
Ն

# ԼՐՋՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍ

**Ք**իչ մը ամեն տեղ լրջութեան պակաս կայ մեր կեանքին մէջ: Խախտած են չափի ու չափանիշի հասկացողութիւնները: Աջ ու ձախ ձրի տիտղոսներ եւ շքանշաններ կը բաժնուին՝ հաճոյակատարութեան ընդհանուր մթնոլորտի մը մէջ:

Մեր շուրջը աւելի շատ գովասանքներու շռայլանք կայ՝ քան սրտցաւ ու շինիչ թելադրանք: Աւելի շատ ծափ ու փառաբանանք կայ՝ քան հաշիւ պահանջող լրջախոհ մօտեցում ու կեցւածք:

Մեր չափը դարձած է չափազանցութիւնը: Մեր պարծանքը՝ մեր նուագագոյն յաջողութիւնը:

Բարքերու անկումը հասած է բանաւոր ու գրաւոր քարոզչութեան մեր բեմերը: Այսպէս, ընթացիկ մեր ձեռնարկները դարձած են «աննախընթաց», «փառաշուք» ու «բացառիկ»: Երբ գրող ու կարդացող հաւասարապէս գիտեն, որ եղածը սովորական բան մըն է, որուն համար պէտք է խնայել ժողովուրդին դատելու կարողութիւնը կասկածի ենթարկող նշման վիրաւորանքները:

Օրին մէկը միջազգային մամուլին մէջ ածականներու նման հեղեղի մը չենք հանդիպած ու դժուար թէ հանդիպինք: Անլրջութեան սահման մը կայ, որմէ անդին «խելքը գլուխը» մարդիկ չեն յանդգնիր անցնիլ:

Մեր մօտ, ամեն մարդ տաղանդ է: Ամեն մարդ բացառիկ ձիրքով մը օժտուած է: Հասած ենք երանելի այն թուականը, ուր համեստ ու միջակ կարողութեան տէր անձեր Դիոգինես-

եան լապտերով պէտք է փնտռել կարծես...

Կը բաւէ որ մէկը յանձնախմբային փոքր պաշտօն մը ստանձնէ: Ամեն մարդ կը ծափահարէ զինք: Ոչ ոք կը հետաքրքրուի անոր աշխատանքին արդիւնքով ու մակարդակով: Չանագանութիւն չկայ արժեմին ու չարժեմին միջեւ:

Վաստակաշատ ու նորահաս դէմքեր յաճախ հաւասար արժէքով կը ներկայացուին հանրութեան, պատճառ դառնալով վերջիններու կանխահաս յաւակնութիւններուն եւ խամրումին:

Կը մոռցուին խոնարհները, համեստ ողջերը, մանաւանդ՝ հիւները: Անոնք ալ կրնան մխիթարութիւնը ունենալ, որ իրենց մահէն ետք շատերու հետ իրենք ալ կրնան դասուիլ «անկրկնելի»ներու շարքին:

Ո՞ր փնտռել պատճառը բարքերու այս ապականումին: Բախտախնդիր ու անլուրջ մարդոց մօտ անպայման:

Բարոյական սկզբունքներու եւ աւանդութիւններու հսկայ նահանջ մը կ'ապրինք:

Ե՞րբ կանգ պիտի առնէ այս երեւոյթը: Որո՞նք պիտի ըլլան անոր առաջը առնողները:

Չենք գիտեր: Գիտենք միայն, որ լուռ մեծամասնութիւն մը այլեւս անընդունելի կը գտնէ այս մթնոլորտը:

Ջգաստութեան հրաւերը բոլորին է, փրկելու համար մեր վերջին առաքիւնութիւնները, որոնց կորուստով կը դադրինք այլեւս ազգ ու միութիւն ըլլալէ:

Կը դառնանք անդիմագիծ ու աննրպատակ հաւաքականութիւն:

# ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ, ԵՐԵՒԱՆ)

**2**012-ը յոբելենական տարի է հայտնի ինչքան համար եւ ինչքան լաւ որ այդպէս է, որովհետեւ առիթը կ'ընծայէ մեր առօրեայէն պահ մը դուրս գալու եւ լուսարձակի տակ առնելու դէպքեր ու դէմքեր, որոնք ազգային մեր ինքնութեան դարբինները կը հանդիսանան:


Եթէ յոբելենները չըլլային, շատ բան մոռացութեան հովերուն պիտի տրուէր եւ ազգային մեր յիշողութիւնը ժամանակի ընթացքին պիտի խամրէր:

2012-ի յոբելեններու շարքին է նաեւ հայ սկառտութեան հիմնադրութեան ոսկեայ յոբելեանը, որ հպարտալի երեւոյթ է անկասկած:

Արդարեւ, հայտնիները եղաւ առաջիններէն, որ հաւատարմով միջազգային սկառտութեան մարդկային վեհ սկզբունքներուն, կանուխէն, Պէյտըն Փաուըլի ստեղծած շարժումէն չորս տարի ետք միայն, հայկականութեամբ ետուն Պոլիս քաղաքին մէջ հիմը դրաւ հայ սկառտութեան, նոր էջ բանալով հայ մարզական ու երիտասարդական շարժումներու պատմութեան մէջ:

Պատահականութեան մը արդիւնքը չէր հայ սկառտութեան հիմնադրութիւնը, այլ՝ ազգային երկունքի մը բնական հետեւանքն էր ան: Հայկական ազատագրական շարժումը 20-րդ դարու սկիզբը սկսած էր ձեւաւորել նոր հայր, որ դարբերու ստրկութեան լուծը թօթափած՝ բռնած էր քաղաքակրթութեան ճամբան: Մարզանքն ու մարզախաղերը լայնօրէն մուտք գործած էին հայ կեանքէն ներս: Ամէնուր պահանջը կը զգացուէր ունենալու «ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր ու անձնուէր հայեր»:

Քանի պահանջը կար, պիտի ըլլային նաեւ պահանջին ընդառաջողներ: Շաւարշ Քրիսեան իր «Մարմնամարզ» թերթով պիտի ըլլար առաջին դրօշակիրը այս պահանջին: Իրեն պիտի արձագանգէր մեծ դաստիարակ, «Նոր դպրոց»ի տնօրէն Յովհաննէս Հինդլեան: Երկուքին պիտի միանար Սկիւտարի սկառտական խումբին եւ հայկական մարզարանին



վարիչը՝ Գրիգոր Յակոբեան: Այսպէս, պիտի կազմուէր կորիզ մը, որուն շուրջ կարճ ժամանակի ընթացքին պիտի բոլորուէին պոլսահայ մարզասէր երիտասարդներ՝ սկառտական շարժում ստեղծելու նպատակով:

Ինչպէս համամարդկային ամէն շարժում, սակայն, սկառտութիւնն ալ ուղղակի պիտի չփոխադրուէր մեր կեանքէն ներս: Յովհաննէս Հինդլեանի թելադրանքը տեղին է, երբ ան կը շեշտէ՝ որ՝ «Հիմակուհիմա, ես պիտի փափաքէի որ Պէյտըն Փաուըլի հիմնած սկառտներու ակումբին նման ակումբ մը հիմնելու ետեւէն չըլլաք, այլ ձեր բարքերուն մէջ մտցնէք այդ ձեռնարկին ոգին՝ որ կը հաւատամ թէ շատ յարմար է ազնուացնելու մեր ցեղը»:

Հինդլեան խոհեմ մարդ էր: Հաւանաբար ան կը վախնար, որ գինուորական բնոյթի նման շարժումի մը ստեղծումը հայտնի մէջ լաւ աչքով կրնար չդիտուիլ Օսմանեան վարիչներուն կողմէ:

Ուրեմն, սկառտական միջազգային շարժումը որդեգրուելէ առաջ պիտի հայացուէր: Սկառտը պիտի կոչուէր Արի, իսկ «Միշտ պատրաստ» նշանաբանին տեղ պիտի որդեգրուէր նոյնքան վեհհիմաստ այլ նշանախօսք մը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»:

Այս առաջին փորձը չէր, անշուշտ, նման շարժում մը յառաջացնելու: Պէյտըն Փաուըլին շատ առաջ, 17-րդ դարուն, սկառտական նմանօրինակ շարժում մը գոյութիւն ունեցած է Մոլտաւիոյ մէջ: Այդ մասին կը վկայէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Խոյեան, երբ կը հաստատէ, որ Ս. Էջմիածնի «Արարատ» ամսագիրի հին թիւերէն մէկուն մէջ, ան հանդիպած է կանոնադրութեան մը, որ 1680-ական թուականներէն սկսեալ եւ մինչեւ 19-րդ դարու սկիզբները, յաջորդաբար վաւերացուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսներէ: Կանոնադրութիւնը կը վերաբերի Մոլտաւիոյ Պոթուլան եւ այլ քաղաքներու հայ պատանիներու կազմակերպութեան, որ ծանօթ էր Պրասարաւա անունով եւ որուն անդամները կը կոչուէին Կտրիճներ»:

Պրասրաւան հայկական Սփիւռքի պատանեկան մէկ շարժում էր, որ սակայն տարածուելու եւ զարգանալու լայն հնարաւորութիւններ չունէր, մինչդեռ 1912-ի սկսուողական շարժումը միջազգային բնոյթ ունենալով եւ ազգային ենթահողի վրայ հիմնուելով՝ բոլոր տուեալները ունէր յարատեւելու եւ մեծնալու: Զարմանալի չէ, որ 1915-ի Յեղասպանութեան նման ահաւոր հարուած մը անկարող պիտի ըլլար անոր թափը կասեցնելու:

1918-ին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեամբ, նախաեղեռնեան սկսուողական շարժումը պիտի վերականգնէր եւ այնուհետեւ իր երթը պիտի շարունակէր անխափան, միշտ ծառայութեան նոր դաշտեր ստեղծելով իր դիմաց:

Արդարեւ, առաջին Աշխարհամարտը հազիւ աւարտած, Հ.Մ.Ը.Մ-ի սկսուողութիւնը պիտի լծուէր բազմահազար Հայ որբերու ինամատարութեան աշխատանքին: Պոլսոյ մէջ պիտի հիմնուէր ճրի դեղարան, իսկ Սկիւտարի մէջ պիտի ստեղծուէր շարժուն հիւանդանոց՝ հայ գաղթականներուն օժանդակելու նպատակով: Սկսուողական շարժումը պիտի մտնէր որբանոցներ եւ մարզական առողջ դաստիարակութիւն պիտի ջամբէր իրենց բախտին լքուած հայ մանուկներու:

Սկսուողութիւնը ձեռք պիտի երկարէր նաեւ նորանկախ հայրենիքին: Հայաստանի լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանի դիմումին ընդառաջելով, 1920-ին հայրենիք պիտի գործուողուէր սկսուողական եռանդամ պատուիրակութիւն մը՝ Հայաստանի որբերը կազմակերպելու նպատակով: Առաքելութիւնը դիւրին չէր: Այս մասին կ'արժէ լսել վկայութիւնը պատուիրակութեան անդամներէն՝ Վահան Չերազի, որ հազիւ Հայաստան հասած՝ ահա թէ ինչ կը գրէ Արտասահմանի իր ընկերներուն. «... Երեք հոգի ենք եւ պիտի մարմնակրթենք Հայաստանը: Պիտի կազմենք սկսուողական խումբեր: Պիտի հայացնենք լեզուն, հրամանները, խառնուածքները, ոգին: Պիտի մտնենք որբանոցները, ուր հազարներու զանգուած մը կայ: Պիտի հսկենք դպրոցներու մարզանքի դասաւանդութեանց: Պիտի զբաղինք մամուլով: Նիւթ, գոյք, զգեստեղէն պէտք է ճարենք երկրի մը մէջ, ուր ոչինչ կայ:

«Այս ամէնքէն ետք, մենք մեզմով ալ պիտի զբաղինք: Բնակարան չունինք, սենեակ չունինք: Կը պառկինք հանդիպած տեղը կամ վարժարանի մը չոր տախտակամածին վրայ: Ուտելիքը կը ճարուի առհաշիւ ծախսով: Հաց չես գտներ այստեղ, պէտք է ճաշարան երթալ, պարպել քսակը, իսկ եթէ տուն ալ ունենաս, ինչպէս պիտի պատրաստես ուտելիքդ. ոչ փայտ կայ, ոչ ածուխ, ոչ քարիւղ, ոչ կնիկ ունիս, ոչ քոյր, ոչ մամիկ, ոչ ալ ժամանակ: ... Գիտակցօրէն կ'ընդունինք այս բոլորը եւ զղջացած չենք, որովհետեւ Հայաստանի մէջ գտնուելու անգնահատելի գոհունակութիւնը ունինք»:

Յորեկնական այս հանդիսութեան ընթացքին, կարելի չէ պահ մը կանգ չառնել Չերազի վկայութեան դիմաց եւ բարձրաձայն հարց չտալ, թէ՛

Սկսուողական այդ ո՞ր դաս-

տիարակութիւնն էր, որ Չերազի նման սկսուողները կը մղէր տուն-տեղ ձգելու եւ երթալ ապրելու «երկրի մը մէջ, ուր ոչինչ կար»:

Չարքաշութեան այդ ինչ դաստիարակութիւն էր, որ սկսուողները կը մղէր պառկելու «հանդիպած տեղը կամ վարժարանի մը չոր տախտակամածին վրայ», առանց փայտի, ածուխի եւ քարիւղի:

Ու տակաւին, ազգային այդ ինչ ոգի էր, որ հազար ու մէկ զրկանք կրող հայ սկսուող կը մղէր գիտակցօրէն ընդունելու այս բոլորը եւ Հայաստանի մէջ գտնուելու անգնահատելի գոհունակութիւնը գգալու:

Հ.Մ.Ը.Մ-ին կ'երթայ պատիւը այդ դաստիարակութեան: Քրիսեաններու յաջորդները՝ Տիգրան Խոյեանները, Օննիկ Եազմաճեանները, Վահան Չերազները հաւատարիմ տարածիչները կը հանդիսանային այն սկզբունքներուն, որոնք հայ սկսուողութեան հիմնադրութեան գլխաւոր առանցքը կը կազմէին, այն է՝ «ունենալ ամուր նկարագրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին ու հայրենիքին եւ նուիրուելու հայ ժողովուրդի ձգտումներու իրագործումին»:

Յաջողութիւնը մեծ էր: Այդ կը վկայէ նաեւ սկսուողական շարժումին հիմնադիրը՝ Պէյտըն Փաուրը «Տը սկսուող» թերթի 1922-ի համարներէն մէկուն մէջ, երբ կը գրէ, թէ «Գրեթէ տարի մը առաջ այս տղաքը անկիրթ, աղտոտ արարածներ էին (ակնարկութիւնը՝ Հայաստանի որբերուն մասին է), այսօր կ'ըսեն թէ ազնիւ, մաքուր ու առողջ երիտասարդ տղաներ եղած են եւ արժանաւոր կերպով պահպանութիւնը կ'ընեն իրենց գտնուած միջավայրին»:

Ափսո՛ս, որ Չերազի եւ իր ընկերներուն հոյակապ յաջողութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ Հայաստանի մէջ համայնավար վարչակարգի հաստատումով, հայ պատանիներու դաստիարակութիւնը կը դառնայ պետական մենաշնորհ եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկսուողներուն կու գան փոխարինելու Պարսկոմներու, Պիոներներու եւ Կոմսոմոլներու կազմակերպութիւնները:

Դէպքերը գահավէժ ընթացք կ'ունենան նաեւ Թուրքիոյ մէջ, ուր Պոլսոյ եւ գաւառներուն մէջ չորս տարի գործելէ ետք, Հ.Մ.Ը.Մ- քաղաքական ծանօթ պայմաններու բերումով՝ 16 Սեպտեմբեր 1922-ին պաշտօնապէս լուծուած կը յայտարարէ իր կազմակերպութիւնը երկրի տարածքին եւ կ'անցնի Արտասահման՝ հայ մարդու սփիւռքեան ճակատագիրը դառնօրէն ապրելու համար:

Տեղ մը լուծուելէ ետք, սակայն, Հ.Մ.Ը.Մ- կը վերածնի այլ լուր, կրկնապատիկ մասնաճիւղերով եւ բազմապատիկ սկսուողական շարքերով: 1920-ական տարիներու սկիզբը հայ

սկսուողութիւնը իր առաջին սերմերը կը նետէ Միջին Արեւելեան եւ Արեւելեան Եւրոպայի հայկական գաղութներուն մէջ: Հալէպէն մինչեւ Աթէնք, Վառնա եւ Պէյրութ, սկսուողութիւնը աչքառուն երկայութիւն կը դառնայ մարդկային ու ազգային դաստիարակութեան իր նուիրական առաքե-

Սկսուողական այդ ո՞ր դաստիարակութիւնն էր, որ Չերազի նման սկսուողները կը մղէր տուն-տեղ ձգելու եւ երթալ ապրելու «երկրի մը մէջ, ուր ոչինչ կար»:

լուծեամբ: Պոլսոյ սկաուտական վարիչներէն մաս մըն ալ կ'անցնի Փարիզ, ուր կը ծաւալէ աշխոյժ գործունէութիւն:

Ի տես այդ գործունէութեան, սկաուտական միջազգային շարժումը Փարիզի Հ.Մ.Ը.Մ-ի ըսկաուտները 1928-ին կը հրաւիրէ Լոնտոնի մէջ տեղի ունենալիք միջազգային ճամպորիին: Խումբին ղեկավարութիւնը կը վստահուի Արտաշէս Պէրպէրեանին, որ վերջին պահուն չի կրնար ընկերանալ խումբին եւ գայն կը փոխարինէ տոքթ. Գուրգէն Մեծատուրեանը: Վերջինը Լոնտոն հասնելով, ինքզինք կը ներկայացնէ իբրեւ հայ սկաուտներու ղեկավար, իսկ իր խմբակն ալ՝ իբրեւ այսպէս կոչուած «Հայ Արիներու միութիւն»: Փարիզ վերադարձին, Մեծատուրեան կը մերժէ ենթարկուիլ Հ.Մ.Ը.Մ-ի Փարիզի կեդրոնին եւ, իբրեւ առանձին միութիւն, ան մենաշնորհ կ'ունենայ աշխարհասփիւռ հայ սկաուտութիւնը ներկայացնելու միջազգային սկաուտութեան մօտ:

Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ գործուած պատմական այս անիրաւութիւնը ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ հայ սկաուտութեան հիմնադիրին ու գլխաւոր ներկայացուցիչին համար, որովհետեւ գայն կը գրկէ սկաուտական միջազգային ընտանիքին անդամակցութեան կարելիութենէն: Բան մը, որ մէ բնականաբար կը գրկուին նաեւ իրմէ ետք ստեղծուած սկաուտական այլ կազմակերպութիւնները՝ Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւնը (Հ.Ե.Ը.) եւ Հայ Մարմնամարզական Միութիւնը (Հ.Մ.Մ.), որոնք կ'ունենան աւելի սահմանափակ տարածում եւ գործունէութիւն:

Կու գայ օրը, սակայն, անիրաւութեան սրբագրութեան եւ հայ սկաուտութեան ջահը իր արժանաւորին վերադարձնելու: 1988-ի պատմական շրջադարձէն ետք, երբ ազգային արժէքները կամաց-կամաց կը վերադառնան Հայաստան, Հ.Մ.Ը.Մ-ը կը հանդիսանայ հայրենիք վերադարձող առաջին կազմակերպութիւններէն: Տակաւին անկախութիւն չառած, 1989-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Փարիզի սկաուտները Մոսկուայի վրայով Երեւան երթալով բանակում կը կատարեն Խ. Հայաստանի մէջ: Նոյն տարուան Դեկտեմբերին, կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ-ի առաջին մասնաճիւղը Երեւանի մէջ եւ 70 տարուան ընդմիջումէ ետք, հայրենիքը դարձեալ կը ծանօթանայ հայ սկաուտական շարժումին:

1989-1991 սկաուտական բազմաթիւ միաւորներ կը ստեղծուին Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ, նորահաս սերունդներու դաստիարակութեան նոր փորձառութիւն մը պարզեցնելով հայրենի հայութեան: Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ-ը, որ 70 տարի շարունակ երազած ու պատրաստուած էր այս օրուան, անվերապահ օժանդակութեան ձեռք կ'երկարէ հայրենի իր քոյր միաւորներուն եւ ամէն ջանք ի գործ կը դնէ սկաուտական շարժումը ամուր հիմերու վրայ դնելու համար:

**100-ամեայ հայ սկաուտական շարժումը այսօր ներկայ է Հայաստանի մէջ, որովհետեւ անոր ներկայութիւնը կենսական է: 100 տարիներու իր առաքելութիւնը չէ փոխուած ու ան ընելիք ունի քաղաքացիական պարտաւորութիւններու գիտակից հայ մարդու պատրաստութեան իմաստով: Սկաուտութիւնը կոչուած է յաղթելու փողոցին: Ան պարտականութիւնը ունի սերունդներ դաստիարակելու, որպէսզի անոնք հեռու մնան ապազգային ու ապառող մթնոլորտէ:**

1991-ին, սկաուտական շարժումի առաջին նուիրեալներէն Վարդան Բախշեան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան անդամ: Հայաստանի մէջ կը կազմակերպուին խմբապետներու պատրաստութեան դպրոց-բանակումներ: Սկաուտներ կը մասնակցին համա-Հ.Մ.Ը.Մ-ական նախաձեռնութիւններու (Նաւասարդեան խաղեր՝ Մ. Նահանգներու մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակում՝ Յունաստանի մէջ):

Մինչ գետնի վրայ աշխատանքները կը ծաւալին օրէ օր, անդին Եւրոպայի մէջ երկար բանակցութիւններ կը տարուին հայ սկաուտութեան մուտքը ապահովելու միջազգային սկաուտական ընտանիքէն ներս:

Կ'օգտագործուի ամէն առիթ՝ նպատակը յաջողորնելու համար:

Սկաուտական միջազգային կազմակերպութեան պատասխանատուին Լիբանան այցելութիւնը այս աշխատանքին կու տայ յաւելեալ մղում: Պատասխանատուն Լիբանանի մէջ մօտէն կը ծանօթանայ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական միաւորներուն եւ իր հիացումը կը յայտնէ այս իմաստով Հայաստանի մէջ տարուած աշխատանքին համար: Ի վերջոյ, կարելի կ'ըլլայ սրբագրել պատմական անիրաւութիւնը:

1928-ի Լոնտոնեան պատահարէն 68 տարի ետք, Հ.Մ.Ը.Մ-ի ջանքերուն շնորհիւ, Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի սկաուտութիւնը, որ կը վերանուանուի Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն՝ Հ.Ա.Ս.Կ., «Հայ Արիներ»էն կը ստանձնէ միջազգային սկաուտութեան մօտ հայ սկաուտութեան ներկայացուցչութեան ջահը: Յաջորդ տարի, 17 Ապրիլ 1997-ին, Հ.Ա.Ս.Կ. պաշտօնապէս մաս կը կազմէ միջազգային սկաուտական շարժումին եւ կը հանդիսանայ սկաուտական եւրօ-ասիական բաժանմունքի հիմնադիրներէն:

100-ամեայ հայ սկաուտական շարժումը այսօր ներկայ է Հայաստանի մէջ, որովհետեւ անոր ներկայութիւնը կենսական է: 100 տարիներու իր առաքելութիւնը չէ փոխուած ու ան ընելիք ունի քաղաքացիական պարտաւորութիւններու գիտակից հայ մարդու պատրաստութեան իմաստով: Սկաուտութիւնը կոչուած է յաղթելու փողոցին: Ան պարտականութիւնը ունի սերունդներ դաստիարակելու, որպէսզի անոնք հեռու մնան ապազգային ու ապառող մթնոլորտէ:

Հայ սկաուտութեան 100-ամեայ յոբելեանին առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին ջերմ շնորհաւորութիւնները կը փոխանցենք հայ սկաուտութեան արժանաւոր ներկայացուցիչին՝ Հ.Ա.Ս.Կ.-ին:

Պատիւ ու պարծանք հայ սկաուտութեան ջահը բարձր պահած բոլոր նուիրեալներուն եւ՝

«Յառաջ անսասան, յառաջ անդեղեւ» ընթանալու մարտնչութեանը՝ երկրորդ 100-ամեակը կերտելիք սերունդին:

# ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՔԻ ԲԱՐԳԱԲԱՃՄԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԵՐԹԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ)



ատմութեան ճակատագրական հանգրուաններէն մէկուն, առաքելատիպ առաջնորդներու իմաստուն հոգեկերտուածքին ու խիզախ յանդգնութեան շնորհիւ, այսօր, համայն հայութիւնը ճակատաբաց ու խրոխտ կը կանգնի իր Եռագոյն դրօշով, որպէս մէկ եւ անբաժանելի ժողովուրդ՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:



Թեամբ ու տիրական ներկայութեամբ առինքնած է իր շրջապատը աշխարհի չորս ծագերուն եւ ցուցաբերած է տոկուն վարքագիծ:

Հարկ է ստորագծել, որ, իրօք, Հ.Մ.Ը.Մ., որպէս պայծառ միջավայր ու մթնոլորտ, իբրեւ ուրոյն մտածողութիւն եւ ինքնութիւն, փաստօրէն յաջողած է կողմնորոշել իրերայաջորդ սերունդներուն ներգործօն եւ խանդավառ նախաձեռնութիւնները, հանդիսանալ անոնց մղիչ ուժը՝ յանուն հայրենիքի բարգաւաճման եւ ազգային

Բնականաբար, հպարտութիւն եւ ակնածանք առթող ու մանաւանդ՝ երախտագիտութեամբ ու վճռակամութեամբ հոգեզինուելու պերճախօս առիթ մը կը հանդիսանայ այս պատմակերտ օրը, որ պարզ թուական մը չէ, այլ՝ մեր ոգեշունչ ու յաղթակերտ մաքառումներուն եւ մեր հաւաքական ներուժին ու անժամանցելի արժէքներուն սլացքը հունաւորող ազգային գիտակցութեան կենարար էտարրերը անգամ մը եւս լոյսին բերող կտակ ու պատգամ է միաժամանակ:

պահանջատիրական երթի ամրապնդման:

Միւս կողմէ, սակայն, մարտահրաւէրներուն մարտահրաւէրը՝ համաշխարհայնացման ներկայացուցած առօրեայ փոփոխութիւններն են, որոնք կը ներկայանան քողարկուած զանազան ձեւերու տակ՝ ձուլումի նոր կերպեր, մեր հաւաքական կեանքը փոթորկող ընկերային ու տնտեսական ահաւոր տագնապներով եւ շրջանային գինուորաքաղաքական անորոշ իրավիճակով:

Այնուամենայնիւ, տօնախմբութեան յիշատակումները առիթ են նաեւ ինքնարժեքներուն եւ ինքնաբերելի գացման համաշունչ արժանիքները առաւել խարսխելու, անոնցմով ուռճանալու եւ հզօրանալու, ինչպէս նաեւ՝ գոյութեան կան գիտակցութեամբ առաջնորդուելու, յանձնառութեամբ տոգորուելու եւ համազգային տենչերու ոլորտները խորապէս ըմբռնելու, ծառայած խոչընդոտներն ու մարտահրաւէրները գիտակցութեամբ տարբադադրելու եւ յաղթահարելու հրամայական պահանջը: Վերոյիշեալ նախադրեալներուն մէջ կը կայանայ մեր սրբազան գոյերթին երաշխիքը:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ը իր բնական գործընթացին մէջ, պայքարելու համար համաշխարհայնացման վտանգներուն դէմ, լիարժէք հասկացողութեամբ առաջնորդուելու «հարկադրանք»էն թելադրուած՝ հեռանկարային առաջադրանքներով ճամբայ ելած է ռազմավարական վերանորոգ ծրագիրներով ու պարտաւորութիւններով, որոնք, փաստօրէն, իր գործունէութեան կիզակէտը կը հանդիսանան՝ հեռու պատեհապատութենէ եւ մակերեսային ժամանակաւոր մօտեցումներէ՝ ստեղծելով անպարագիծ հորիզոններ եւ ջամբելով խորքային ըմբռնումներու հիմերով մնայուն լուծումներ՝ ջրդեղելու միութեանական եռանդը եւ ամրագրելու տիպար հաւաքականութիւն մը:

Տասնամեակներ շարունակ, իրերու դրութեան դաժան դասաւորումներուն, աշխարհաքաղաքական տարրեր պայմաններու եւ ստեղծուած անբարենպաստ կացութիւններու դէմ Հ.Մ.Ը.Մ.ը կարողացած է հաստատակամ թիավարել հոսանքն ի վեր, հաւատարիմ իր հիմնադիրներուն ապագայակերտ ու մարդակերտ տեսլականին՝ շարունակած է իր պատմական երթն ու առաքելութիւնը եւ իւրայատուկ գրաւչու-

Վերջին ամիսներուն ընթացքին յուսադրիչ ակնկալութիւններով հետեւեցանք Հայոց Յեղասպանութիւնը քրէականացնող բանաձեւի տնօրինումին վաւերացման հոլովոյթին,



որ դժբախտաբար մնաց անստորագիր, սակայն այս անկորնչելի վայրէջն՝ Պուրճ Համուտէն, Սփիւռքի հայութեան հայտնութիւնը բազմաթիւ անգամ մը եւս հաւաքաբար կը գոչենք՝

- Ստորագիր թէ անստորագիր օրէնք՝ իրականութիւնը չի կրնար քողարկուած մնալ եւ մարդկութեան արդարութեան խիղճը չի կրնար երկար ժամանակ լռել եւ զիտողի արհեստական նայուածքներով հետեւիլ:

- Այնքան ատեն որ թշնամին պիտի ուրանայ իր մեծ հայրերուն գործած քստմնելի ոճիրը, մենք նոյն ժողովուրդն ենք, անցեալին թէ այսօր, երբեք ու երբեք պիտի չզիջինք ու տկարանանք, ընդհակառակն՝ ժամանակները մեզ աւելի պիտի զօրացնեն, եւ մենք՝ իբրեւ դատ ու տեսլական ունեցող ժողովուրդ, անվհատ ու անսպառ կամքով պիտի շարունակենք մեր պահանջատիրութիւնը մինչեւ մեր իրաւունքներուն վերատիրացումը: Ահա թէ ինչո՞ւ Օսմանեան թուրքերու ժառանգորդներուն կը յիշեցնենք, որ Աբէլի աչքը միշտ պիտի մնայ իրենց նայուածքներուն ետին՝ նորածինին թէ տարեցին, երիտասարդին թէ չափահասին, այնքան ատեն որ թշնամիին թոռները կը մնան խուլ եւ կ'ուրանան իրենց գործած մեծ ոճիրը եւ կը մերժեն արդար հատուցում կատարել:

Այսօր համախմբուած ենք նաեւ միասնաբար յիշատակելու Շուշիի ազատագրութեան լուսաշող 20-ամեակը:

Ամեակներու յիշատակութիւնը մեզի համար ազգային ինքնուրոյն գիտակցութեան մկրտութեան օր է:

Այո՛, մկրտութեան օր՝

- Մեր նահատակներու սրբալոյս արեամբ,
- Մեր ազատամարտիկներու անբասիր արեամբ,

- Մեր մեսրոպաշունչ տառերով, գրականութեամբ, ուսանելի պատմութեամբ ու հոգեշունչ մշակոյթով:

Հետեւաբար, այսօր մեզմէ կ'ակնկալուի ճանաչողական ու առողջ գգացողութեան յաւելեալ ներդրում եւ պատրաստակամութիւն, որակի ըմբռնումի եւ հայեցի դիմագիծի շեշտուած յանձնառութիւն:

Արդարեւ, գաղափարապաշտութիւնն ու անձնագոհութիւնը որպէս ուղեւորներ, պիտի շնչեն իրերայաջորդ սերունդներու մէջ՝ կենսունակ ու մղիչ ուժը դառնալով ազատագրական մեր պայքարին, ինչպէս նաեւ՝ ազգային կեանքի եւ հայեցի նկարագրի բարոյական անխաթարութեան ի խնդիր:

Պատի՛ւ բոլոր անոնց, որոնք գաղափարական մկրտութիւն ստացան:

Պատի՛ւ բոլոր անոնց, որոնք կրցան անմար պահել ազատագրական մեր պայքարը:

Պատի՛ւ բոլոր անոնց, որոնք յարութիւն տուին մեր նորանկախ հայրենիքին ու Արցախին:


Ահաւասիկ, այս թելադրանքներով ու առաջադրանքներով, գարնանային օր մը՝ նման Մայիս 28-ի ոգեղէն շունչին, անգամ մը եւս «Յառաջ նահատակ»ը հպարտաձայն ու խրոխտ պիտի հնչեցնենք Արարատի սէգ գագաթէն:

Եւ հաստատաբայլ ու յաղթական երթը պիտի շարունակելի ամէն օր եւ ամէն ժամ, Արարատի ծագերէն մինչեւ հայկական հեռաւորագոյն գաղթօճախները Սփիւռքի, մինչեւ իրականացումը մեր մեծ երազին՝ Ազատ, Անկախ եւ Ամբողջական Հայաստանի կերտումին:

Քայլ առա՛ջ, օ՛ն:

## ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵՋԻ ՈՒՂԵՑՈՅՑ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԲԷՇԻՇԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ)



Մայիս 28-ի տօնն է դարձեալ:

Հայաստանի անկախութեան 94-րդ տարեդարձ, Շուշիի ազատագրութեան 20-ամեակ եւ Մայիսեան փառատօն:

Այսօր հպարտօրէն կը տողանցեն Հ.Մ.Ը.Մ.Ի կամաւոր բանակին սկառտներն ու մարզիկները, ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն մասնակցած հայկական վարժարաններու աշակերտ-աշակերտուհիները, ինչպէս նաեւ՝ առաջին անգամ ըլլալով տողանցքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի նորաստեղծ մասնաճիւղին մարզիկները, մասնաճիւղին դրօշին ներքեւ:

Մարտիի ու պատերազմի օրերուն ծնունդ առած այս միութիւնը, 94 տարիներ շարունակ, ժամանակին հետ կապ պահեց եւ հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու գտնուող զանազան երկիրներու մէջ, հայրենագուրկ հայ մանուկին,

պատանիին եւ երիտասարդին սորվեցուց հայրենիքի սէրն ու հայ մնայու գաղտնիքը:

Հ.Մ.Ը.Մ. երկար տարիներ գործեց հայրենիքէն դուրս՝ հայրենիքին համար, եւ եղաւ այն կրթարանը, որ սերունդներուն փոխանցեց հայավայել վճռականութիւն, աննկուն կամք եւ աննահանջ հաւատք՝ հանդէպ ազգասիրութեան:

Այսօր, իր ծառայութեան դաշտը ընդարձակած աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ՝ Լիբանանէն մինչեւ Աւստրալիա, Յունաստանէն մինչեւ Արժանթին եւ Գանատա, Հ.Մ.Ը.Մ. իր 103 մասնաճիւղերով կը շարունակէ իր առաքելութիւնը:

2011-2012 կրթական տարեշրջանի վերամուտին հետ, ազդանշանը տրուեցաւ նաեւ ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն, եւ ամէն շաբաթավերջին գանազան մարզախաղերու մասնակցող հայկական 26 վարժարաններու աշակերտներ առիթը ունեցան մարզական ու եղբայրական ազնիւ ոգիով մրցելու իրենց տարեկիցներուն հետ:

Բիւր յարգանք 94 տարիներ առաջ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան գաղափարը յղացած հիմնադիրներուն:

Բիւր յարգանք երկար տարիներ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին ծառայած եւ անցած վաստակաշատ բոլոր ծանօթ ու անծանօթ, բազմաթիւ խոնարհ հերոսներուն, որոնք անսակարկ զոհողութիւններ յանձն առին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը գոյատեւէ ու բարգաւաճի եւ հայ դպրոցի կողքին, իբրեւ երկրորդ կրթարան դաստիարակէ մատղաշ սերունդներ:

Փա՛ռք Հ.Մ.Ը.Մ-ի պանծալի դրօշին:

Պատի՛ւ այդ դրօշը բարձր բռնած «կամաւոր բանակ»ին, որ գիտէ մնալ «մի՛շտ պատրաստ»:

Փա՛ռք Հ.Մ.Ը.Մ-ին, պատիւ հայութեան:

Միրելի՛ տղաք ու աղջիկներ, ձեր դերին եւ կոչումին հաւատարմութեամբ բարձրանաք, ու ձեզմով՝ հպարտ հայութիւնն ալ բարձրացնէք:

Ձեզմէ կը սպասուի բացառիկ զոհողութիւն, այո՛, որովհետեւ մեր կեանքին պայմանները բացառիկ են, եւ ամէն յաջողութիւն եւ իրագործում՝ բացառիկ ճիգերով միայն կ'իրագործուի:

Մեր պատմութիւնը՝ մեզի ուղեցոյց:

Թող մեր կուրծքերուն տակ բարախէ Շաւարշ Քրիսեաններու սիրտը:

Թող մեր երակներէն հոսի Գրիգոր Յակոբեաններու եւ Յովհաննէս Հինդլեաններու վճիտ արիւնը...

Փաստօրէն բոլորեցինք 94-րդ տարին: Ակնթարթ մը՝ ու կը կանգնինք դարու մը վաստակին դիմաց, կը ձեռնուինք 100-ամեակին հետ: Մի՞նչ այդ:

Նո՛յնն ենք: Անփոփոխ, աննկուն, աննահանջ, կայտառ, չարքաշ ու արի, հաւատարիմ ու պայծառ:

Մեր ճակատին ու կուրծքին՝ Արարատ, Երեւան, Սարգարապատ, հայոց պատմութիւն, հայոց տառապանք, Շուշի եւ Արցախ, որով՝ յաղթական, ու մանաւանդ՝ հաւատարիմ երթ:

Ողջո՛յն Հ.Մ.Ը.Մ-ի 94-ամեայ կայտառ բանակին, անոր չարքաշ մարզիկին, սկառուտին արծուբերի նայուածքին, երդումին եւ դրօշին:

(Շար.ը՝ էջ 40)

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ո Յ

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ

Թերթիս Տնօրէնը Աղեքսանդրիա գրտ. նուած միջոցին հետամուտ եղաւ կազմել մարմնամարզական ակումբ մը:

Յատուկ կոչով մը տեղւոյն երիտասարդութիւնը հրաւիրուած էր խորհրդակցութեան, ուր խօսեցան Տեարք Տօքդ. Ժամկոչեան եւ Շ. Քրիսեան:

Ներկաներուն բուն ողբերգութեան մէջ ակումբը կազմուեցաւ Կամփ անուան ներքեւ, ու առաջին աւթիւ լսկ 40ի մօտ անձեր փութացին արձանագրուիլ իբր գործօն անկամ:

77

տարիներ առաջ, 1911-ին, մարզական շարժումի ռահվիրայ, եղերաբախտ Շաւարշ Քրիսեանի «Հայ մարմնակրթական շարժումի մը հիմնադրման» տեսիլքը կեանքի կոչուեցաւ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ: Աղեքսանդրիա իր այցելութեան առթիւ, 1912-ին, Պօղոսեան Ազգային Վարժարանի նախկին շրջանաւարտներէն 30 հոգինոց հաւատաւորներու ընտրեալ փաղանգ մը, որ աշակերտած էր Պօղոսեան Ազգային Վարժարանի մարմնակրթանքի մասնագէտ ուսուցիչ փրոֆ. Արթիւր Էլմասեանի, հաւաքուեցաւ Աղեքսանդրիոյ Ազգային Առաջնողարանին դահլիճը եւ, նախագահութեամբ թեմական ժողովի ատենապետ տեար Միսաք Ժամկոչեանի, գումարուեցաւ առաջին ընդհանուր ժողովը եւ ընտրուեցաւ «Կամփ»ի առաջին վարչութիւնը՝ գլխաւորութեամբ քաղաքական ժողովի ատենապետ պրն. Պերճ Օհանեանի, որ իբրեւ գլխաւոր գործակից ունէր երիտասարդութեան ղեկավար պրն. Բարսեղ Օհանեանը:

Ազգապատկան Ապուտարտարի հողամասին վրայ վախժուտ տարի գործելէ եւ շարունակաբար կազմակերպելէ ետք մարզական ողիմպիական հանդիսութիւններ, աթլետիզմի, ֆուտպոլի, պասքեթպոլի ձեռնարկներ, ըսկառուական եւ արենուշական ազգային ու միջազգային հանդիսութիւններ, ու կառուցելէ ետք ներկայանալի ժողովասրահներ, սկառուական ու մարզական թանգարան սրահներ, որոնք ոչ միայն պատիւ կը բերէին եգիպտահայութեան, այլեւ համայն սփիւռքահայութեան, այս բոլորը, 48 ժամուան մէջ, հարկադրաբար վերածուեցան տափարակ հողի:

Շնորհիւ շատ սիրելի տեար Վահան Ալեքսանեանի (ընդհանուր հիւպատոս Աւստրիոյ) հանդարտաբարոյ եւ ուղղամիտ կեցուածքին, կարելի եղաւ փրկել այս ազգատարի կեցուածքին, կարելի եղաւ փրկել այս ազգատարի կեցուածքին, կարելի եղաւ փրկել այս ազգատարի կեցուածքին:

Շնորհիւ շատ սիրելի տեար Վահան Ալեքսանեանի (ընդհանուր հիւպատոս Աւստրիոյ) հանդարտաբարոյ եւ ուղղամիտ կեցուածքին, կարելի եղաւ փրկել այս ազգատարի կեցուածքին, կարելի եղաւ փրկել այս ազգատարի կեցուածքին:

# ՓԱՌԱԲՈՐ ԱՆՑԵԱԿԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

պատկան հողատարածքը, որ այսօր նիւթապէս մեծապէս կը նպաստէ Ազգային Առաջնորդարանի սնտուկին: «Յառաջդիմասէր» Մշակութային Ընկերակցութեան հիմնադիր մարմինը սիրով բարեհաճեցաւ «Կամք»ի տրամադրութեան տակ դնել իր մարգարաշտը: Ու վերսկսաւ շինութիւնը, վերանորոգումը, շէնմթնոլորտին ճաճանշումը:

Ազգային բարերար տէր եւ տիկին Նորայր Պէնոհանեաններ թիկունք կանգնեցան մեր երիտասարդութեան եւ ամէն զոհողութիւն յանձն առին պատնէշի վրայ տեսնելու համար «Կամք» Մարգական Ակումբը, որ կը նկատուի Սփիւռքի առաջնակարգ հայ մարգական ակումբներէն մէկը:

Երբ կը խօսուի «Կամք» Մարգական Ակումբի վերաշինութեան աշխատանքին մասին, պէտք է արդարօրէն ըսել, որ իրենց արժանի տեղը ունին տէր եւ տիկին Լեւոն Քաղթացեանները, որոնք նոյնպէս զօրավիգ կանգնեցան «Կամք»ի ընդհանուր գործունէութեան:

Այժմ, «Կամք»ի վարչութիւնը կը գործէ իր 12-րդ ատենապետին առաջնորդութեամբ: Խիզախումի այդ օրերէն անցած են 75 երկարածիգ տարիներ: Մերթ տատասկոտ, յաճախ վարդահեղեղ ճամբաներէ անցաւ մեր Մարգական Ակումբը: Երբեք նահանջ չճանչցաւ եւ ոչ ալ տեղքայլ քալեց միշտ առաջ, «միշտ պատրաստ» նշանաբանով եւ «Բարձրացիր-բարձրացուր» քաղցրահունչ իտէայլը իր սրտին մէջ:

75 երկար տարիներու ընթացքին, «Կամք»-ի մարզիկներն ու մարզիկուհիները աթլետիզմի իրենց անմոռանալի ողիմպիականներով, ֆուտպոլի եւ պասքետպոլի յաղթական խոյանքներով, ինչպէս նաեւ սկաուտական եւ արեւուշական փառահեղ հանդիսութիւններով ու տողանցնքներով պանծացուցին հայու անունն ու վարկը ասպնջական այս գաղութին մէջ:

75 երկար տարիներու ընթացքին «Կամք»ի մարզիկներն ու մարզիկուհիները ոչ միայն դաստիարակուեցան մարմնակրթանքով, այլեւ իրենց սրտին ու հոգիին տեսա-

Ադրեսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը ծանօթացրնող կարեւոր վկայութիւն մըն է ստորեւ տրուած պատգամը, որ միութեան 75-ամեակին առիթով արտասանուած է 9 Յուլիս 1988-ին, «Կամք»ի Ռամլէի հաւաքավայրին մէջ կազմակերպուած հանդիսութեան մը ընթացքին:

Պատգամախօսը միութեան երախտաշատ անդամներէն էր. Վահան Գաւուրճեանն է: Հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ 1924-ին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին եւ 16 տարի իբրեւ ըսկաուտ ու մարզիկ ծառայել է ետք, 1940-էն մինչեւ մահը՝ 1996 մաս կազմած է անոր յաջորդական վարչական կազմերուն, 1964-էն ետք ստանձնելով ատենապետի պատասխանատու պաշտօնը:

նելի եղան մեր սիրելի Արարատն ու Երեւանը, ու իրենց ճակտին ու կուրծքին վրայ դրոշմուեցաւ հայոց պատմութիւնը, հայոց տառապանքը ու նաեւ յաղթական երթը Սարդարապատով, Բաշ Ապարանով ու Ղարաքիլիսէով:


75 երկար տարիներ ետք «Կամք» կը մնայ նոյնը, ԱՆՓՈՓՈՒՍ, ԱՆՆԸԿՈՒՆ եւ ԱՆՆԱՀԱՆՁ:

75 տարեկան, սակայն միշտ երիտասարդ, այսօր «Կամք» Մարգական Ակումբը կը դտնուի ոչ միայն մեր նորահաս սե-

րունդները ֆիզիքապէս դաստիարակելու, այլեւ, ու մանաւանդ, անաղարտ դիմագիծով հայ մարդը պատրաստելու առաքելութեան դէմ յանդիման՝ ներարկելով ազգային ինքնագիտակցութեան, ազգասիրութեան եւ հայրենասիրութեան ոգին:

75 տարիներու վաստակով բեռնաւոր «Կամք» Մարգական Ակումբը աննահանջ պիտի շարունակէ գոյապայքարը, մինչեւ որ հասնի վարդահեղեղ արշալոյսին, մեր նորահաս սերունդի ազգասպասանման վսեմ իտէայլին իրականացման:

1974-ին, երբ կազմուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը, նկատելով որ Հ.Մ.Ը.Մ.-ը կը հետապնդէ նոյն նպատակները եւ ունի նոյն ձգտումները, «Կամք»ի վարչութիւնը որոշեց միանալ Հ.Մ.Ը.Մ.-ի համագաղութային կառույցին, իբրեւ անոր 62 մասնաճիւղերէն մէկը:



# ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ. «ԿԱՄՔ»Ը ՄԷԿ ԴԱՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ

Բ. Թորիկեան  
ՊԵՅՐՈՒԹ

**Հ** .Մ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ «Կամք» մասնաճիւղը հիմնուած է 1912-ի ամբարան, «Կամք» Մարմնամարզական Ակումբ անունով եւ Շաւարշ Քրիսեանի քաջալերանքով: Քրիսեան այդ օրերուն Աղեքսանդրիա կը գտնուէր ամառնային արձակուրդի: Մասնաճիւղին հիմնադրութեան նախաձեռնողները կ'ըլլան Աղեքսանդրիոյ Ազգային Պօղոսեան Վարժարանի մարզանքի ուսուցիչ Ստեփան Խանճեան եւ Բարսեղ Օհանեան (որ նաեւ նիւթապէս կ'օժանդակէ «Կամք»ի կազմութեան): Հիմնադիր ժողովին ներկայ կը գտնուին քառասուն երիտասարդներ, որոնք տեղւոյն վրայ կ'անդամագրուին միութեան:

«Կամք»ի գործունէութեան առանցքը կը կազմեն աթլետիկ մրցումներ, պասքեթպոլ, ֆուտբոլ եւ լողը: Հետզհետէ զարգացող այս մարզախաղերու խումբերէն ժամանակի ընթացքին կը հասնին կարեւոր ուժեր, որոնք Եգիպտոսի մարզական շրջանակներուն մէջ խօսիչ կու տան իրենց մասին՝ մասնակցելով Եգիպտոսի մէջ կազմակերպուող միջազգային մրցումներու, ապահովելով ախոյեանութիւններ եւ հաստատելով աթլետիկ մի պատուաւոր արդիւնքներ:

Կազմակերպական գետնի վրայ, մասնաճիւղին առաջին տարիներու կեդրոնական դէմքերէն կ'ըլլայ մարզական ակումբի պատուակալ ատենապետ՝ Մանուկ Մանուկեան, որուն նիւթական օժանդակութիւններուն շնորհիւ «Կամք»ը կ'ունենայ իր սեփական մարզադաշտը, իբրեւ կռուան ակումբի հաստատ գոյատեւման: Մասնաճիւղին առաջին տարիներու վարչական կազմերուն մէջ գործած է Թովմաս Քողիկեան (վարչութեան ատենապետ): Լաւագոյն մարզիկներէն եղած են Ն. Եղուշեան (պասքեթպոլ) եւ Գէորգ Տէր Սիմոնեան (աթլետիկ):

1940-ական թուականներուն, «Կամք»ի յառաջդիմութիւնները կարճատեւ շրջան մը կը դանդաղին Բ. Աշխարհամարտին եւ Հայաստան ներգաղթի արդիւնք՝ շարքերու նօսրացման պատճառով: Սակայն, 1948-էն սկսեալ, Հրաչ Հէքիմեանի, Մաքսուտ Սարաֆեանի եւ Յովհաննէս Գանոնճեանի ճիգերով «Կամք»ի մարզական խումբերը կրկին առաջին դիրքերու վրայ կը գտնուին: Օրուան վարչական պաշտօններու



գլխաւոր աշխատանքները կը ծանրանան Մելքի Գլրնճեանի ուսերուն: Ան անսակարկ զոհողութեամբ կը յաջողի «Կամք»ի մարզական եւ սկաուտական բաժինները հասցնել իրենց երբեմնի բարձր մակարդակին:

### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Կամք»ի սկաուտական բաժինն գործունէութիւնը կը ըսկսի 1915-ին, «Հայ հետազօտիչներ» անուան տակ: Այս բաժինն զարգացման առաջին օրերուն կը նպաստեն Բարսեղ Օհանեան եւ Կարօ Աշրգեան: Առաջին տարիներուն շարժումին խմբապետութիւնը կը ստանձնէ Ազգային Պօղոսեան Վարժարանի մարզանքի ուսուցիչ Ստեփան Խանճեան, որուն շուտով կը հետեւի Գ. Չոպանեան:

«Հայ հետազօտիչներ»ու բաժինը կը ղեկավարուի աստիճանաւորական կազմի մը կողմէ, բաղկացած՝ ընդհանուր խմբապետէ, Կարմիր Խաչի խմբապետէ եւ շարժումի ենթաբաժանումներու խմբապետներէն:


Ժամանակի ընթացքին, «Հայ հետազօտիչներ»ու հրապարակային ելոյթներով սկաուտական շարժումը կը ծանօթացուի Եգիպտոսի հայ եւ օտար շրջանակներուն, յատկապէս վայելելով անգլիացի խմբապետներու վստահութիւնն ու քաջալերանքը:

1952-ին, Աղեքսանդրիոյ «Կամք»ը մարզական եւ հրապարակային ելոյթներով կը նշէ մասնաճիւղին հիմնադրութեան քառասնամեայ յորելեանը: Այս հանդիսութիւններուն կը մասնակցին Եգիպտոսի մարզական բոլոր կազմակերպութիւնները:

«Կամք»ի պասքեթպոլի խումբերը տարիներու աւանդութիւն կը դարձնեն եգիպտահայ միջ-ակմբային մրցաշարքերու մասնակցութիւնը կամ կազմակերպումը: Այս մրցաշարքերուն յաճախակի ախոյեանութիւններ կ'ապահովեն «Կամք»ի տղոց ու աղջկանց պասքեթպոլի խումբերը:

Աթլետիզմի բաժնին մէջ կարեւոր արդիւնքներ կ'ապահովեն Պերճ Տէտէեան, Անահիտ Սարգիսեան, Վարդանոյշ Պանտայեան, Ճիմի Լաչինեան, Ալեքսան Զայրմայրեան, Արամ Սարգիսեան եւ մանաւանդ «Կամք»ի 4x100 մ. դրօշաւաւի խումբերը, որոնք բազմիցս մրցանիշներ կը հաստատեն Հ.Մ.Ը.Մ.ի թէ եգիպտահայ մրցաշարքերու ընթացքին:

1970-1980ական թուականներուն «Կամք»ի վարչական ծառայութեան մէջ կարեւոր ներդրում կ'ունենան Լեւոն Արփի-



1998. Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի սկաուտներ Սօւտ Մայրիկի աճիւններու դագաղին շուրջ:

կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական կառույցին, իբրեւ Մեկուսի շրջան վերջնականապէս նուիրականացնելով Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» կոչումը:

արեան, Նուպար Թընկըրեան, Նուպար Մանուկեան, Խաչիկ Շահապեան, Անտոն Մինասեան, Պերճ Հալլաճեան, Ռոպէր Գոչիկեան, Պերճ Խորասանճեան, Արա Աբգարեան, Սիլվա Հալլաճեան, Զոհրապ եւ Վահան Գաւուքճեաններ: Վերջինը 1980-ին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան կողմէ կ'արժանանայ միութեան «Արժանեաց» շքանշանին:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմութենէն սկսեալ եւ միութեան նորագոյն շրջանի Պատգամաւորական անդրանիկ Ընդհանուր Ժողովին մասնակցութենէն ետք, Աղեքսանդրիոյ «Կամք»ը պաշտօնապէս մաս

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


# HOTEL

## PAVILLON MONCEAU PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



Studio VICKEN 2005 PARIS

# ՄՈՆԹՐԷԱԼԻ ԵՒ ՄԻՏՆԻԻ «ԿԱՄՔ» ՄԱՍՆԱԾԻՒԴԵՐԸ

## ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀՄԸՄ-«ԿԱՄՔ»-Ը

8 մարտ 1958-ին, գլխավորութեամբ Պետրոս Գաբրիէլեանի, Վարուժան Պոյաճեան, Գէորգ Սեւակեան եւ Վահագն Սաւուրեան կը դիմեն Մոնթրէալի Հ.Յ.Դ. «Միհրան Փափագեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Լեւոն Տէր Ասատուրեանին եւ կը յայտնեն ՀՄԸՄ-ի մասնաճիւղ մը հիմնելու իրենց ծրագիրը:

Դիմումը դրական ընթացք ըստանալով, մասնաճիւղին հիմնադիր անդամները անմիջապէս կը ձեռնարկեն ֆութպոլի խումբի մը կազմութեան: Ֆութպոլի խումբի կազմութիւնը առաջին քայլը կը հանդիսանայ մասնաճիւղին մարզական գործունէութեան: Խումբը տեղական շրջանակներուն կը ներկայանայ «Արմենիա» անունով:

ՀՄԸՄ-ի «Արմենիա» խումբին յաջողութիւնները շատ արագ ընթացք կը ստանան եւ մասնաճիւղին շուրջ կը բոլորուի հաւատաւոր եւ մարզասէր երիտասարդներու խումբ մը: Ֆութպոլի խումբին փորձերը կը կատարուին «Park Avenue»-ի քաղաքապետարանի դաշտերուն վրայ:

1959-ին, St. Zotique թաղի Ս. Յակոբ եկեղեցւոյ ներքնամասին մէջ, ՀՄԸՄ-ի խումբին կը տրամադրուի միջերանոցէն խուց մը, իբր նստավայր, եւ այս ձեւով Մոնթրէալի ՀՄԸՄ-ի մասնաճիւղը հաստատուն հանգամանք կը ստանայ: Այնուհետեւ, մարզական եւ սկաուտական գոյգ ճիւղերու գործունէութեամբ, ինչպէս նաեւ ազգային եւ պետական ելոյթներու իրենց մասնակցութեամբ, ՀՄԸՄ-ի Մոնթրէալի մասնաճիւղը յաջող հնգամեակ մը կը բոլորէ եւ յաջորդող տարիներուն հետզհետէ հաստատուելով՝ Մոնթրէալի հայ գաղութի կարեւորագոյն գործօններէն մէկը կը հանդիսանայ:

1965 տարին անկիւնադարձային նշանակութիւն կ'ունենայ Մոնթրէալի ՀՄԸՄ-ի մասնաճիւղին համար: Այս տարեշրջանին է, որ վարչութիւնը կը դիմէ ՀՄԸՄ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան՝ մաս կազմելու համար անոր ցանցին ենթակայ մասնաճիւղերուն: Այս ձեւով պիտի իրականանար սկիզբէն ի վեր Մոնթրէալի ՀՄԸՄ-ի ղեկավարներուն հիմնական ծրագիրը: Այսպէս, 3 Մայիս 1965 թուակիր իր գրութեամբ Մոնթրէալի վարչութիւնը կը դիմէ

Աղեքսանդրիոյ «Կամք» մասնաճիւղը տարիներու ընթացքին ծնունդ տուած է «Կամք» անունով երկու այլ մասնաճիւղերու, երբ եգիպտոսէն Գանատա եւ Աւստրալիա փոխադրուած «Կամք»-ի նախկին անդամներ իրենց երբեմնի մասնաճիւղին անունով կոչած են իրենց հիմնած նոր մասնաճիւղերը՝ Մոնթրէալի եւ Աւստրալիոյ մէջ: Այս արդէն առանձին պատմութիւն է, որուն կ'անդրադառնանք ստորեւ:

Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան՝ խնդրելով որ Մոնթրէալը ճանչցուի Սփիւռքի հայ մարզական մեծագոյն կազմակերպութեան իբրեւ լիիրաւ անդամ:

Վերոյիշեալ դիմումին դրական պատասխանը չուշանար եւ 11 Մայիս 1965 թուակիր իր թիւ 22 նամակով, ՀՄԸՄ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւնը կը շնորհաւորէ Մոնթրէալի ՀՄԸՄ-ի կազմութիւնն ու տարած գործունէութիւնը եւ կը վաւերացնէ գործող վարչական կազմը:

Միւս կողմէ, 1965-ի սկզբնաւորութեան մասնաճիւղի անդամակ-

ցութենէն անջատուելով եւ նոյն վայրը իբր կեդրոն ունենալով, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքի «Կամք» մարզական միութեան նախկին անդամներ կը կազմեն նոյնանուն Մարզական Միութիւն մը, իրենց գործունէութեան գլխավոր առանցք ունենալով պասքեթպոլի ճիւղը: «Կամք»-ի պասքեթպոլի խումբը եւս կ'ունենայ յաջող գործունէութիւն եւ իր շուրջ կը հաւաքէ երիտասարդ եւ խոստմնայից աթլէթներու կարեւոր թիւ մը:

Սակայն, ՀՄԸՄ-ի եւ «Կամք»-ի նոյն վայրին մէջ գործելու պարագան ժխտական հետեւանք պիտի ունենար՝ գաղափարակից գոյգ կազմակերպութիւններու անդամներուն միջեւ որոշ զգայնութիւններ ստեղծելով:

Այս դրութիւնը մտահոգիչ սահմաններու հասնելով Հ.Յ.Դ. «Միհրան Փափագեան» կոմիտէութեան միջնորդութեամբ, օրուան գոյգ միութիւններու ղեկավարները համախոհութիւնը կ'ունենան ծրագրելու եւ իրականացնելու գոյգ կազմակերպութիւններու միացումը ՀՄԸՄ-«Կամք» անունով՝ միեւնոյն կազմակերպութեան մէջ, որդեգրելով ՀՄԸՄ-ի Ընդհանուր ծրագիր կանոնագիրը:

Այս միացման նախաձեռնողներէն կը կազմուի վարչութիւն մը, իւրաքանչիւր կազմակերպութենէն չորսական անդամներու մասնակցութեամբ եւ Սկաուտական Խորհուրդի մէկ ներկայացուցիչով: Այս առժամեայ վարչութեան ղիւանը կը կազմուի 27 Յունիս 1966-ի անդրանիկ նիստին, հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Բիւզանդ Մելքոնեան
- Ատենադպիր՝ Վարուժան Սերոբեան
- Գանձապահ՝ Վարդգէս Յակոբեան

Հաշուապահ եւ Սկաուտական  
Խորհուրդի ներկայացուցիչ՝ Հայկ  
Պէյլերեան

Գոյքապահ՝ Վարուժան Զուրիկեան

Մարզական պատասխանատու՝  
Գրիգոր Նիզիպլեան

Խորհրդականներ՝ Արմէն Կէօնճեան եւ Վահագն Սաւուրեան

Ֆուտբոլի պատասխանատու՝  
Գէորգ Սեւակեան:

Վերոյիշեալ համաձայնագրին մասնա-

րամասնութիւնները պարզող 29 Յունիս 1966 թուակիրը իր նամակով Հ.Մ.Բ.Մ.-«Կամք»-ի վարչութիւնը կը դիմէ Հ.Մ.Բ.Մ.-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան՝ Պէյրութ, խնդրելով վարչական կազմի վաւերացում: 12 Յուլիս 1966-ին, Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ փոխանցման շրջանի վարչական կազմը:

Մասնաճիւղը այժմ ունի 806 անդամ:

**ՍԻՏՆԻԻ «ԿԱՄՔ» ՄԱՄՆԱՃԻԻՂԸ**

Սիտնիի «Կամք» մասնաճիւղը կը հանդիսանայ Աւստրալիոյ տարածքին հիմնուած Հ.Մ.Բ.Մ.-ի չորրորդ մասնաճիւղը: Ան կը հիմնուի 1981-ին, Արեւելեան Սիտնիի մէջ, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Բ.Մ.-«Կամք»-ի նախկին անդամներու կողմէ:

Առաջին հաւաքովի տեղի կ'ունենայ 19 Յուլիս 1981-ին,



նոր մասնաճիւղի կազմութեան համար նշանակուած յանձնախումբին հրաւերով: Յանձնախումբի ատենապետ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան կը պարզէ Հ.Մ.Բ.Մ.-ի նպատակը եւ կը տեղեկացնէ, թէ 50-է աւելի նորագիր անդամներ մարզական փորձերով սկսած են արդէն մասնաճիւղին գործունէութեան: Աւստրալիոյ Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Վազգէն Փայլակեան իր կարգին կը հաստատէ Արեւելեան Սիտնիի մասնաճիւղին կազմութիւնը եւ

Շրջանային Վարչութեան ամբողջական զօրակցութիւնը կը խոստանայ նորաստեղծ մասնաճիւղին յաջողութեան համար:

Մասնաճիւղին հիմնադրութեան պաշտօնական ժողովը տեղի կ'ունենայ 7 Նոյեմբեր 1982-ին: Ժողովի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վազգէն Փայլակեան մասնաճիւղին դրօշը կը յանձնէ «Կամք» մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանին: Մասնաճիւղի վարչութեան մնացեալ անդամները կը հանդիսանան՝ Կարօ Քիրիշեան, Երեմ Շահինեան, Յարութ Հինգլեան, Յակոբ Տէր Պետրոսեան, Արմանոօ Ֆերհատեան եւ Կարպիս Նիկողոսեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ սկաուտութիւն: Անդամներուն ընդհանուր թիւը կը կազմէ 85: Այժմ ան կը հաշուէ 15 անդամ:

**Elegance Plus**  
Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՊԱՐՏՔՆ Է ՄԱՐԴ ԵՒ ՄԱՐԴՈՒԺ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՀԱԼԷՊԱՀԱՅ ՎԱՍՏԱԿԱԻՈՐ  
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԷԼԷՅՃԵԱՆ

**Կարելի՞ է մեզի ներկայացնել ձեր կենսագրականը:**

- Մնած եմ Հալէպ, 1924 թուականին: Նախնական ուսումս ստացած եմ Ներսէսեան վարժարանը, որ կը գրտնուէր ճապրիէ թաղամասը: Ապա, դպրոցը տեղափոխուեցաւ Նոր Գիւղ եւ կոչուեցաւ Զաւարեան վարժարան: Սահէթ Ֆարհաթի մէջ Կիւլպէնկեան հաստատութիւնը ունէր դպրոց եւ արհեստավարժութեան կեդրոն մը, ուր դասի կողքին աշակերտութեան արհեստ կը սորվեցնէին: Դպրոցը աւարտելէ ետք՝ եղբորս հետ սկսայ գործի ուղղուիլ, որպէս դերձակ:



կար տարիներ մնալէ ետք՝ փոխադրուեցանք Ս. Գէորգ եկեղեցւոյ մօտ գտնուող հողաշերտը: 1942-ին, երբ փոխ առաջնորդի աստիճանս ստացայ, կրկին զիս փոխանցեցին գայլիկութեան շարքերը, որպէս աստիճանաւոր, հետո ըլլալով եղբայրներ Կարապետ Պէրպէրեանը եւ եղբ. Սահակ Տօնիկեանը, օրուան աքելայ եղբ. Լեւոն Ումէյեանի պատասխանատուութեան տակ: Որոշ շրջան մը գայլիկութեան փորձառութիւնն ստանալէ

ետք, վերադարձանք սկաուտական շարքեր եւ մեզ փոխարինեցին այլ եղբայրներ:

Սկաուտութեան մէջ ունեցանք խումբ մը՝ եղբ. Լեւոն Մերձանեանի պատասխանատուութեամբ: Շրջան մը ետք, երբ եղբ. Լեւոնը հրաժարեցաւ իր պաշտօնէն, ինծի վստահուեցաւ այդ խումբը, որուն պատասխանատուն մնացի մինչեւ 1952 թուական: Խումբին մէջ կային շատ լաւ ու գիտակից սկաուտներ, ինչպէս՝ եղբայրներ Ալեքսան Իսկէնտէրեանը, Վահէ Թիւթիւնճեանը, որոնցմէ ոմանք հետագային եղան քահանաներ: Չորս տարի սկաուտական աշխատանքներէ հեռու մնալէ ետք, երբ խանութիս մէջ կ'աշխատէի, ինծի այցելութիւն մը կատարեց օրուան պատասխանատուներէն՝ եղբ. Նշան Թիւթիւնճեանը, առաջարկելով որ կրկին վերադառնամ սկաուտական շարքեր, ստանձնելու համար խումբի մը պատասխանատուութիւնը: Այնուհետեւ, տարագաւոր աշխատանքս աւարտին հասաւ 1958 թուականին:

**Ի՞նչպէս մուտք գործած էք Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր:**

- 1936 թուականին, եղբորս քաջալերանքով մուտք գործեցի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը, որպէս գայլիկ: Այդ ժամանակ սկաուտական տարագ հագնիլը մեծ հաճոյք էր: Հոգետան մեր պատասխանատուներէն եղբ. Թադէոս Թիւթիւնճեանը ունէր վաճառատուն մը, ուրկէ կը ստանայինք մեր սկաուտական տարագները: Երկու տարի գայլիկ մնալէ եւ մեր գայլիկութեան տարիքը ամբողջացնելէ ետք, մօտ երեսուն հոգի փոխանցուեցանք սկաուտական շարքեր, ուր մեր խումբին պատասխանատուն եղաւ եղբայրս՝ Մովսէս Էլէյճեանը: Այդ շրջանին մեր աշխատանքները կը կատարէինք որբանոցին կից գտնուող զէյթունցիներու հողին վրայ, ուր եր-



**Մինչեւ օրս, դուք ներկայ կը գտնուիք Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր ժողովներուն: Ի՞նչ տարբերութիւն կը գրտնէք անցեալի եւ ներկայի աշխատանքներուն միջեւ:**

- Տարուած աշխատանքներուն համեմատ կը գնահատեմ ներկայ գործունէութիւնները, ըլլան անոնք մարզական կամ սկաուտական, բայց ցաւօք սրտի, ներկայիս կան շատ մը կէտեր, որոնք նեղութիւն կը պատճառեն ինծի: Նախապէս մեր բոլոր ժողովները կ'ըլլային աւելի օրինաւոր. ժողովներու բացումէն մինչեւ փակումը կ'արժարժուէին միութիւնը հետաքրքրող հարցեր, որոնց համար լուծումի մը կը հասնէին, սակայն ներկայիս այս մէկը նուազած կը տեսնեմ: Թէեւ ներկայ պատասխանատուները աւելի զարգացած են, բայց կը



կարծեմ, որ պէտք է աւելի բծախնդիր ըլլան իրենց վստահուած պարտականութիւններուն մէջ:

**Յիշատակելի դէպք մը, զոր մինչեւ օրս կը յիշէք:**

- 1940 թուականին, երբ դպրոցական աշակերտ էի, մեզի լուր եկաւ, որ Ֆրանսացի սպայ մը այցելութիւն պիտի կատարէ Նոր Գիւղի մայրանոցը: Անմիջապէս տուն ուղղուեցանք եւ սկառտական լման տարազներով ներկայ գտնուեցանք մայրանոցի դրան առջեւ, դիմաւորելու համար հիւրը: Տեղատարափ անձրեւի տակ դիմաւորեցինք Ֆրանսացի հիւրը: Արարողութեան ներկայ գտնուեցանք եւ Արտաւազդ Եպս. Սիւրմէլեանը: Շատ լաւ կը յիշեմ Սրբազան Հօր խօսքերը, որոնցմով մեզ քաջալերեց, երբ տեսաւ որ տեղատարափ անձրեւին տակ լիովին կատարեցինք մեզի վստահուած պարտականութիւնը:



Դամասկոսի մէջ, բանակումի մը ընթացքին, կատարեցինք այցելութիւններ, որոնցմէ ամէնէն հետաքրքրականը եղաւ Դամասկոսի բերդին այցելութիւնը: Այդ շրջանին, գինուորներու պատասխանատուն Հրանդ Մալոյեան անունով հայ մըն էր: Սկառտական քառեակ մը կազմեցինք եւ «պատուի առ»ով դիմաւորեցինք «ժեներալ»ը: Ան նոյնպէս գինուորական «պատուի առ»ով մեզ դիմաւորեց: Այս դէպքը մեծ հրճուանք պատճառեց մեզի, որովհետեւ Մալոյեանի պէս «ժեներալ» մը մեզ կը յարգէր «պատուի առ»ով:

**Ձեր շրջանին ինչպիսի՞ դժուարութիւններու հանդիպած էք:**

- Մենք այդ օրերուն կլանուած էինք հայապահպանման հարցով, որովհետեւ թրքախօսութիւնը պատճառ կը դառնար որ մեր աշխատանքները որոշ չափով դժուարութեան մատնուէին: Այդ պատճառով միշտ զարկ կու տայինք դաստիարակչական ծրագիրներու: Այս վիճակը մնաց մինչեւ 1945 թուական: Կազմակերպեցինք գիշերային գործունէութիւններ: Թիլիի ակումբին մէջ կազմակերպուեցան հայերէնի, անգլերէնի եւ ֆրանսերէնի դասընթացքներ, որոնց մասնակցեցան մեծ թիւով սկառտներ: Իսկապէս, Հ.Մ.Ը.Մ-ի այդ շրջանի խմբապետները հոգատար էին եւ ոչ մէկ ճիգ կը խնայէին սերունդը հայեցի դաստիարակութեամբ գրահեյու համար:

**Ի՞նչ պատասխանատուութիւններ վարած կամ գործունէութիւններու մասնակցած էք:**

- 1980-ին, երբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը ընտրուեցաւ, ուզեցին կազմել Շրջանային Սկառտ-Խորհուրդ մը: Այդ շրջանին ինծի առաջարկեցին մաս կազմել Շրջանային Սկառտ-Խորհուրդին, ուր մնացի յաջորդական 12 տարիներ:

Վերջին տարիներուն ստանձնեցի ատենապետութեան պաշտօնը: Այդ շրջանին յաջողեցանք կազմակերպել զանազան ձեռնարկներ, սեմինարներ, դասընթացքներ, սկառտական այլատեսակ գործունէութիւններ եւ դիւանային խմբապետական ժողովներ: Հ.Մ.Ը.Մ-ի կողքին, 1985-էն ըսկսեալ եղած եմ Ս. Աստուածածին եկեղեցւոյ աղքատախնամի անդամ: Սկառտական կեանքին մէջ սորված օրինաւորութեանս շնորհիւ, կարողացայ մեծ աշխատանք տանիլ ըստանձնած պարտականութիւններու մէջ: Պատրաստեցինք տոմարներ, որոնց մէջ յիշուեցաւ իւրաքանչիւր ընտանիքի տեղեկութիւնը՝ իր բոլոր մանրամասնութիւններով: Փափաքս է, որ նոր սերունդը ըլլայ իր պարտականութեան գիտակից եւ ուղղուի ծառայութեան դաշտ: Վարչական պաշտօններ ստանձնած եմ նաեւ տպարան «Արեւելք»ին մէջ:

**Իբրեւ երէց եղբայր ի՞նչ խօսք կ'ուղղէք Հ.Մ.Ը.Մ-ի ներկայ սերունդին:**

- Բոլոր երիտասարդներուն կոչ կ'ուղղեմ անդամակցելու միութեան մը: Յարգանքս բոլորին, միութենականը կը յատկանշուի իր վարուելակերպով, խօսքով եւ գործով, որովհետեւ միութենական կեանքին մէջ շատ մը դժուարութիւններու կը հանդիպինք եւ ամէն մէկ դժուարութիւնը մեզի փորձառութիւն մը կու տայ եւ կը ստիպէ, որ յաղթահարենք բոլոր տեսակի դժուարութիւնները:

Միութիւնը կը սորվեցնէ կարգ ու կանոնը, կեանքի օրէնքները: Ես կ'ուզեմ որ նոր սերունդի անդամները ըլլան խոստումնալից ու գիտակից պատանիներ եւ երիտասարդներ: Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայ պատասխանատուներուն պարտքն է մարդ եւ մարդուժ պատրաստելը: Անհրաժեշտ է, որ պատասխանատուն իր պաշտօնին մէջ չթերանայ եւ դառնայ խթանիչ օրինակ, որովհետեւ իր արարքը պատճառ կը դառնայ որ յաջորդող սերունդներն ալ պատրաստուին նոյն գիտակցութեամբ:

**ԵՂԲ. ՊԱՐԳԵԻ ՊՕՇԿԷՉԷՆԵԱՆ**

«Մարզիկ»ի թիւ 356-ի «Մեր Տեսակցութիւնները» բաժինով (էջ 12-13) ներկայացուցինք Հայկապի մեր աշխատակիցին հարցազրոյցը՝ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Պարգեւ Պօշկեղեանի հետ: Հետեւաբար, հարցազրոյցին ենթավերնագրին մէջ պէտք էր կարդալ եղբոր անունը:

Վրիպակին համար կ'ապաւինինք մեր ընթերցողներու ներողամտութեան:

# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



1933. Հ.Ա.Ը.Մ.ի Հալեպի սկաուտներու բանակում Քեսապի մէջ:

«Մարզիկ»ի այս թիւով իր աւարտին կը հասնի Ներսէս Արք. Բախտիկեանի կոթողային ուսումնասիրութեան առաջին բաժինը (սկիզբը՝ թերթին 309-րդ թիւին մէջ), որ 113 մեքենագրեալ էջերու մէջ կը ներկայացնէ Հ.Ա.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի մասնաճիւղերուն պատմութիւնը 1915-1930:

Մեծարժէք այս ուսումնասիրութիւնը ունի նաեւ երկու այլ բաժիններ՝ 1930-1940 եւ 1940-1950, աւելի քան 300 մեքենագրեալ էջերով, պատրաստ՝ հրատարակութեան: Քանի մը թիւ ետք, «Մարզիկ» նոր յօդուածաշարքով մը կը ձեռնարկէ երկրորդ բաժինն հրատարակութեան:

«Յառաջդիմասէր»ի սրահին մէջ, ուր ներկայ էին Հ.Մ.-Ը.Մ.ի գրեթէ բոլոր անդամները եւ սկաուտները՝ մօտ 75 հոգի: Երեկոյթին կը նախագահէր Սիսակ Պոյաճեան, «Յառաջ նահատակ»էն ետք խօսք առին Բաբախեան, ապա՝ Թերճանեան, Գէորգ Սազճեան եւ Լոշխանեան:

... «Սկաուտապետ Թերճանեան նկատի ունենալով տեղական կազմին խմբապետին մեկնումը քաղաքէս, անոր տեղ նշանակեց Անտոն Աւետեանը, որ լիովին կը լրացնէ խմբապետի յատկութիւնները, մեծապէս գնահատուած է Դամասկոսի երիտասարդութեան կողմէ, իբրեւ մաքուր բարոյականի տէր մէկը»:

Շրջանային Վարչութիւնը շրջաբերականով մը իր շրջանին սեփականութիւնը կը դարձնէ Դեկտեմբեր 1930-ին, Փարիզի մէջ գումարուելիք Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին պարագան, «որուն ընթացքին ծրագրականոնագրի եւ այլ շատ կարեւոր խնդիրներու մասին մանրակրկիտ քննութիւններ կատարուելով կարեւոր եւ վճռական փոփոխութիւններ տեղի պիտի ունենան միութեանս ապագայ գործունէութեան համար»:

«Արդ, նկատելով որ շրջանս ի վիճակի պիտի չըլլայ նիւթականի եւ ժամանակի անձկութեան պատճառներով իր պատգամաւորը ղրկելու, որոշեց Փարիզի Շրջանային Վարչութեան ներկայացուցած երեք հոգինոց ցանկէն եւ կամ մեզի ծանօթ ոեւէ Հ.Մ.-Ը.Մ.ականի լիազօրութիւն տալ մեր շրջանը ներկայացնելու»:

«Ուստի, Սուրիոյ եւ Լիբանանի վարչութիւններէն կը խընդրուի անպայման եւ առաւելն մինչեւ 5 Դեկտեմբեր ապահովագրեալ նամակով մեզ հասցնել հետեւեալ տեղեկութիւնները»:

1. Մասնաճիւղի նիւթական տեղեկագիր
2. Գործօն, պատուակալ եւ համակիր անդամները ա. Մարզական

## Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԼԲ. ՄԱՍ

**Շ**րջանային Վարչութիւնը կը գրէ Պաալպէք՝ սկաուտ ընդհանուր խմբապետ Սիմոն Թերճանեանին, որպէսզի Դամասկոս այցելէ: Այս առթիւ, Դամասկոսէն «Ազդակ»ին կը գրեն (18 Դեկտեմբեր 1930).-

«Անցած Կիրակի, Դեկտեմբեր 7-ին, Հ.Մ.-Ը.Մ.ի վարչութիւնը միութեան 12-րդ տարեդարձը պիտի տօնէր Հապրայի մէջ, բայց կամքէ անկախ պատճառներով այս հանդէսը յետաձգուեցաւ յառաջիկայ Կիրակի, Դեկտեմբեր 21-ին»:

«Վարչութիւնը օգտուելով սկաուտ խմբապետ Սիմոն Թերճանեանին եւ Սուրէն Բաբախեանին ներկայութենէն, Կիրակի երեկոյ հապճեպ կերպով կազմակերպեց երեկոյթ մը

բ. Սկաուտական

3. Պիլտճէ եւ դրամական վիճակ

4. Գոյքերու ցուցակ

5. Սկաուտական եւ մարզական գործունէութիւն

6. Պիլտճէի հայթայրման միջոցներ

7. Անդամավճարներու գանձումի ձեւը

8. Ձեր քաղաքին սկաուտական, մարզական ֆետերասիոններու ծրագիր-կանոնագիրները.

«Տեղեկութիւնները պէտք է ըլլան, որքան կարելի է, ճշգրիտ եւ ամփոփ, որպէսզի մեր կարգին, հաւաքական տեղեկագիր պատրաստելով մինչեւ 12 Դեկտեմբեր հասցնենք Փարիզ»:

Շրջանային Վարչութիւնը Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը զրկէ 11 Դեկտեմբեր 1930 թուակիր հետեւեալ լիազօրագիրը- «Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, յենելով իր շրջանի ձայներու մեծամասնութեան վրայ, կը լիազօրէ պրն. Վրոյր Հալէպլեանը որպէս լիազօր պատուիրակ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, որ պիտի գումարուի 20 Դեկտեմբեր 1930-ին, Փարիզի մէջ»:

Շրջանային Վարչութիւնը իր 25 Դեկտեմբեր 1930 թուա-



ինչ-ինչ կէտերը, որպէս օրակարգի խնդիրներ ու ըստ այնմ շարժիլ»:

1930 թուականով, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի շրջանը կը բոլորէ իր գոյութեան մօտ տասնամեակը, որ եղաւ առաւելաբար կազմակերպչական շրջան մը, լի դժուարութիւններով, որոնք հետզհետէ հարթուելով՝ Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը ո՛չ միայն զգալի դարձուցին Մերձաւոր Արեւելքի հայկական այս հոծ գաղութներուն մէջ, այլեւ՝ անոր դիմագիծը, ուղին, աւելի յստակ ու պայծառ դարձուցին, բանալով աշխատանքի նոր տասնամեակի մը ճամբան:

(Շար. 32 եւ վերջ)

կիր նամակով կը գրէ իր լիազօր Վրոյր Հալէպլեանին.

«Ներկայ նամակով Շրջանային Վարչութիւնս կը խնդրէ Ձեզմէ որ հաճէիք տեղեկագրել Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն՝ որոշումներուն եւ կարգադրութիւններուն մասին, որպէսզի յառաջիկային գումարուելիք շրջանիս Պատգամաւորական Ժողովին ներկայացնենք անոր

'Made from one single slice of natural Australian opal'

*Classique*  
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



# ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԵՐՈՒՄՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2011-2012 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՄՈՑԻՆ

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Ի**նչպէս ամէն տարի, այս տարի եւս, Փուլթպոլ-լասէր հասարակութիւնը հետեւեցաւ եւրոպական կարգ մը երկիրներու Փուլթպոլի ախոյեանական մրցումներուն թէ՛ պատկերասփիւռի եւ թէ՛ մամուլի կամ համացանցի միջոցով: Շատեր յուսախաբ մնացին, ուրիշներ ուրախացան: Պարզ է սակայն, որ կարգ մը երկիրներու ախոյեանութիւնները մնացին ծայր աստիճան հետաքրքրական ու լարուած, մինչ այլ երկիրներու պարագային զգալի էր ակումբներու մակարդակին անկումը, ինչ որ ախոյեանութիւնը դարձուցած էր ոչ այնքան հետաքրքրական:

### ԱՆԳԼԻԱ

Այս տարեշրջանի սկիզբէն իսկ բացայայտ էր, որ մրցակցութիւնը պիտի չըլլայ միմիայն Մ. Եունայթըտի, Լիվըրփուլի, Արսենալի եւ Չելսիի միջեւ: Անցեալ տարեշրջանին Մ. Սիթին յուշեց, որ բաւական պատրաստուած պիտի սկսի ախոյեանութիւնը եւ մեծ ախորժակներ ունի: Այդպէս ալ պատահեցաւ: Քանի մը շաբաթ յետոյ ան արդէն զրաւած էր առաջին դիրքը եւ ամիսներ շարունակ բացմած մնաց հոն: Ախոյեանութենէն քանի մը շաբաթ առաջ ան անտեղի կէտեր կորսնցնելով իր դիրքը զիջեցաւ դրացի մրցակիցին՝ Մ. Եունայթըտի: Վերջին շաբաթներուն իրարու միջեւ կատարուած մրցումը վճռական էր եւ Սիթի յաղթական դուրս գալով զրաւեց Ա. դիրքը եւ յաջողեցաւ մնալ այնտեղ ու դառնալ

Անգլիոյ ախոյեան: Մինչ Չելսի յաջողեցաւ Անգլիոյ բաժակի աւարտականին յաղթել Լիվըրփուլի եւ տիրանալ բաժակին:

### ԳԵՐՄԱՆԻԱ

Տարեշրջանի սկզբնաւորութեան ամէն մարդ կը կարծէր թէ Պ. Միւնխի մեծ դժուարութիւններու առջեւ պիտի չգտնուի: Ախոյեանութեան սկզբնական հանգրուաններն ալ այդ մէկը ցոյց տուին: Ամիսներ շարունակ Պ. Միւնխի զրաւեց առաջին դիրքը: Պ. Տորթմունտ եւ Շալքէ հետապնդեցին զայն: Պայէրն վերջին երկու ամիսներուն անտեղի հաւասարութիւններ ու պարտութիւններ կրելով կորսնցուց ախոյեանութիւնը: Երեք շաբթուան ընթացքին ան կորսնցուց Գերմանիոյ ախոյեանութիւնը, Գերմանիոյ բաժակը եւ Չեմփիրնզ Լիկի աւարտականին պարտուեցաւ Չելսիէն: Մինչ Տորթմունտ, որ յաջող ձեւով չէր սկսած ախոյեանութիւնը, վերագտաւ ինքզինք եւ հետեւեցաւ Պայէրնի: Ան ոչ միայն գերազանցեց զայն, այլեւ՝ Գերմանիոյ բաժակի աւարտականին 5-2 արդիւնքով Միւնխիին յաղթելով իրագործեց տուալլէ մը:

### ՍՊԱՆԻԱ

Տարեշրջանի ազդանշանէն իսկ առաջ բոլորին համար պարզ էր, որ ախոյեանութեան մրցակցութիւնը պիտի սահմանափակուի Պարսայի եւ Ռէալ Մատրիտի միջեւ: Պարսելոնա ամիսներ շարունակ կը գտնուէր Ա. դիրքին վրայ: Սակայն, քանի մը յաջորդական ձախող արդիւնքներ արձանագրելով այդ դիրքը ան զիջեցաւ Ռէալի: Անոնց միջեւ կատարուած երկրորդ քլասիքոն կրնար նժարը թեքել դէպի Պարսա, սակայն այս վերջինը իր դաշտին վրայ պարտուեցաւ: Մէկ շաբթուան ընթացքին Պարսա կորսնցուց Սպանիոյ ախոյեան-



նութիւնը եւ Չեմփիընզ Լիկի աւարտականին հասնելու իր յոյսերը: Պարսալի համար մխիթարութիւն եղաւ այն, որ տարեշրջանի աւարտին Սպանիոյ բաժակին տիրացաւ՝ պարտութեան մատնելէ ետք Աթլետիքո Պիլպան:

### ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ ախոյեանութեան սկզբնաւորութեան անորոշութիւն կը տիրէր: Գերհզօր խումբեր չկային: Միլանի զոյգ կազմերը՝ Լացիօ եւ Եուվէ հաւանական մրցակիցներ պիտի ըլլային: Ի. Միլան ամբողջ տարեշրջանին չյաջողեցաւ տպաւորել: Ա. Սէ. Միլան հակառակ այն իրողութեան որ չունէր նախորդ տարիներու իր կազմը, յաջողեցաւ սակայն գրաւել առաջին դիրքը: Լացիօ ձախող սկսաւ եւ երկար ժամանակ պէտք եղաւ որպէսզի ինքզինք գտնէ: Եուվէ եղաւ անսխալական: Ան որեւէ պարտութիւն չկրեց ախոյեանութեան ընթացքին: Ան յաջողեցաւ գերազանցել Միլանը՝ յաղթելով անոր եւ տիրանալ տիտղոսին: Իտալիոյ բաժակի աւարտականին հասնելով ան փորձեց իրագործել տուպլէ մը, սակայն Նափոլի պարտութեան մատնեց զայն եւ տիրացաւ բաժակին:

### ՖՐԱՆՍԱ

Ախոյեանութիւնը սկսաւ ըստ նախատեսութեանց, սակայն ժամանակի ընթացքին կարգ մը խումբեր կամաց-կամաց դուրս մնացին տիտղոսին տիրացման մրցակցութենէն: Մարսէյ, Լիոն, Լիլ չկարողացան անցեալ տարուան նման գեղեցիկ ֆուտպոլ ներկայացնել եւ դրական արդիւնքներ արձանագրել: ՓՍ. Ժերմէն ամէնէն ինքնավստահն էր, ու դարձի մրցումներուն կը կարծուէր, թէ անոր ընթացքը պիտի մնայ անխափան: Անոր միակ մրցակիցը Մոնփրիէի կազմն էր, որ միջակ նկատուած խումբ մըն է: Սակայն, Մոնփրիէ կրնակալուի հետեւեցաւ Փարիզի եւ օգտուելով անոր քանի մը ձախող արդիւնքներէն, գրաւեց առաջին դիրքը եւ առաջին անգամ ըլլալով հանդիսացաւ Ֆրանսայի ախոյեան: Ֆրանսայի բաժակի աւարտականը կատարուեցաւ Լիոնի եւ չորրորդ դասակարգի Քենսիվի միջեւ: Լիոն յաղթելով դարձաւ Ֆրանսայի բաժակակիրը:

### ՀՈԼԱՆՏԱ

Այն տպաւորութիւնը կար, որ Հոլանտայի ախոյեանու-



թեան մրցակցութիւնը պիտի կեդրոնանայ ԱԶ-ի, Թվենթէի, Այնտհովընի եւ Այաքսի միջեւ: Ծիշդ է, որ Այաքս յաջողեցաւ տիրանալ ախոյեանութեան, սակայն վերոնշեալ կազմերէն Թվենթէն շատ հեռու էր ախոյեանութեան տիրացման մրցակցութենէն: Այնտհովըն վերջին շաբաթներուն վերագտաւ ինքզինք, բայց ոչինչ կրցաւ ընել: Անակնկալ կազմը եղաւ Ֆեյենուրտ, որ Այաքսի գլխաւոր մրցակիցն էր ու գրաւեց Բ. դիրքը: ԱԶ եւս անցեալ տարուան արդիւնքներէն շատ հեռու էր: Այնտհովըն յաջողեցաւ տիրանալ Հոլանտայի բաժակի աւարտականին՝ պարտութեան մատնելով Հերաքլէս Ալմելոն:

### ԵՈՒՐՕ ԼԻԿ

Եուրօ Լիկի աւարտականը զուտ սպանական մրցակցութիւն էր: Ամէն մարդ կ'ակնկալէր Ա. Պիլպանոյ յաղթանակը: Աւարտականին հասնելու ճամբուն վրայ ան դուրս ձգած էր մեծ ակումբներ, ինչպէս՝ Մանչեսթրի երկու կազմերը: Սակայն, Ա. Մատրիտի մարզիկները այլ կարծիքի էին: Անոնք յաջողեցան չէզոքացնել Պիլպանոյ յարձակումները եւ իրենց կարգին երեք անպատասխան կոլեր նշանակելով երկրորդ անգամ ըլլալով տիրացան Եուրօ Լիկին:

### ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ

Տարեշրջանի սկզբնաւորութեան, ֆուտպոլասէր հասարակութեան եւ մասնագէտներուն կարծիքը այն էր, թէ Չեմփիընզ Լիկի աւարտականին պիտի մրցին Ռէալն ու Պարսան կամ՝ առնուազն անոնցմէ մէկը այլ կազմի մը դէմ: Երկու կազմերը մինչեւ կիսաւարտական անսխալ ընթացան: Պարսա կիսաւարտականին Չելսիի դէմ երկու մրցումներուն քիչ մը անբախտ, քիչ մըն ալ գերյոզնած կազմով ներկայանալով դուրս մնաց: Մինչ Ռէալ Պայէրնի հետ մրցելով նոյնպէս դուրս մնաց: Պայէրն-Չելսի աւարտականը նպաստ Պայէրն Միլնիտին էր: Ան կը մրցէր իր դաշտին վրայ: Չելսի ունէր բացականեր: Նոյնիսկ իսպաղի ընթացքին ոսկեայ առիթ մը ներկայացաւ, երբ իրաւարարը անոր շնորհեց փենալթի մը, որ զսպուեցաւ բերդապահին կողմէ: Ի վերջոյ դիմուեցաւ վճռական փենալթիներու եւ Չելսի գերազանցեց Պայէրնը ու առաջին անգամ ըլլալով տիրացաւ Չեմփիընզ Լիկի տիտղոսին:



# ԳԻՏԱԺՈՂՈՎ ` ՆՈՒԻՐՈՒՄԾ ՀԱՅ ՍԿՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

## Թղթակից ԵՐԵՎԱՆ

**Հ**այ սկաուտուժիկները 100 տարեկան է. արդեն մէկ դար է սկաուտական մեծ ընտանիքի անդամ է: Ապաքաղաքական եւ ապառազմական այս շարժումը Բրիտանիայում ձեւաւորուելուց մի քանի տարի անց, տարածուեց հնդկահայ համայնքում, Պոլսում, յետոյ հաստատուեց Հայաստանի Առաջին Հանրապետութիւնում:

Հայաստանն ու էսթոնիան մէկն էին, որ չունենալով անկախ պետու-

թիւն, մաս կ'ին կազմում սկաուտական այս մեծ ընտանիքին, որին այսօր անդամակցում է 165 երկիր:

Պոլսում լոյս տեսնող «Մարմնամարզ» հանդէսի էջերում 1912 թուին յայտնուեցին տեղեկութիւններ հայկական առաջին սկաուտական խմբերի մասին: Դրան յաջորդեց սկաուտների առաջին քայլերթն ու ազդարարուեց հայկական սկաուտութեան գոյութեան մասին: 1907-ին Բրիտանիայում հիմնադրուած շարժումն արագ մտաւ հայ իրականութիւն: Հայ սկաուտների առաքելութիւնը մեծ էր յատկապէս Պոլսում:

«Հայ ցեղը բարոյապէս եւ մարմնապէս ազնուացնել»- սա սկաուտութեան սկզբունքն էր: Հայաստանի առաջին

անկախ հանրապետութիւնում ըսկաուտներն ակտիւօրէն մասնակցում էին Եղեռնից փրկուած որբերի խնամքին, հոգեւոր եւ ֆիզիքական դաստիարակութեանը:

«Սկաուեց հուժկու շարժում, որտեղ մի քանի ռահվիրաներ փորձեցին իրենց ուսերի վրայ վերցնել ազգը ցնցելու, մարմնապէս, հոգեպէս, բարոյապէս առողջացնելու շարժումը: Ազգի միասնականութեան գաղափարը մէջտեղ բերուեց: Այս շարժումը փորձեց ծառայեցնել միասնականութեան գաղափարախօսութեանը,- ասաց Հայոց Յեղապանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը:

Կառոյցի պատասխանատուները 100 հազարներով են հաշուում այս տարիներին հայ սկաուտական կազմակերպութեան անդամներին: Մանկական եւ երիտասարդական այս շարժման նպատակն առաջին հերթին հայրենասէր, ազատասէր ու պատասխանատու քաղաքացի դաստիարակելն է:

«Պատասխանատուութիւն ինքն իր առջեւ, իր խմբի, շրջապատի առջեւ, քանի որ մաս են կազմում ընդհանուր խմբի, եւ իւրաքանչիւրի վարքագիծն ազդում է ընդհանուր խմբի գործունէութեան վրայ: Եւ երրորդ՝ պատասխանատուութիւն իր երկրի, հայրենիքի, իր ժողովրդի նկատմամբ, նաեւ՝ հաւատ





## «ՈՒՍՈՒՅՈՒՄ ՍԿԱՌԻՏ ՈՒՍՈՒՅԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ

**2** 012 թ. Ապրիլի 6-8-ին Հ.Պ.-Մ.Հ.ի «Աղավնաձոր» հանգստեան տանը տեղի ունեցավ «Ուսուցում սկաուտ ուսուցանողների համար»

ծրագիրը: Դասընթացքին մասնակցեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 32 սկաուտ եւ գայլիկ պատասխանատուներ, ինչպէս նաեւ 10 ներկայացուցիչներ Վրաստանի ըՍԿաուտական Շարժում կազմակերպութիւնից: Դասընթացքը վարում էին Դանիայից ժամանած սկաուտ-ուսուցանողներ Մարտին Կրիստենսենը եւ Անն-Մարի Պոլէն: Ուսուցողական ծրագրին նպատակն էր բարձրացնել մասնակիցների գիտելիքներն ու հմտութիւնները, ինչպէս նաեւ պատրաստել նրանց այնպէս, որ յառաջիկայում կարողանան գործել ազգային մակարդակում: Տեսա-գործնական աշխատանքներն ու երեկոյեան հանգստի ժամերը բաւական յագեցած ու հետաքրքիր էին:

Դասընթացքի ընթացքում տեղի ունեցաւ միջ-մշակութային երեկոյ, երբ երկու երկրների մասնակիցները ներկայացրեցին իրենց ազգային



պարերը, երգն ու խոհանոցը: Ապրիլի 7-ի երեկոյեան, ծրագրի պատասխանատուների կողմից պատրաստուել էր նաեւ հաճելի անակնկալ: Համբարձման Ս. Պատարագից յետոյ, սեմինարի վայր հրաւիրուած Կեչառիսի վանահայր Շահան Քհնյ. Միրզոյեանը դասախօսութիւն ներկայացրեց օրուան խորհրդին հետ կապուած, իսկ հարց ու պատասխանից յետոյ կատարեց Զատիկական սեղանի օրհնութեան կարգ: Ուրախ ու աշխոյժ միջոցառումը շարունակուեց ողջ երեկոյի ընթացքում:

Ծրագրի ընթացքում ներկայացուած ու փոխանակուած գիտելիքներն ու փորձը բաւական օգտակար էին երկու երկրների մասնակիցների համար: Որոշուեց շարունակել համագործակցութիւնն ու 2012 թ. աշնանը փոխադարձ այցով մեկնել Վրաստան:



## «ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔ, ՄԱՔՈՒՐ ԳԵՏԱՌ»

**Մ**արտի 30-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի նախաձեռնութեամբ մեկնարկեց «Մաքուր քաղաք» միջոցառումների շարքը: Առաջին միջոցառումը Շէնգալիթ համայնքի Գետառի մաքրումն էր: Նախաձեռնութիւնը կազմակերպուել էր «Բաց հասարակութեան հիմնադրամ»ի եւ Շէնգալիթ համայնքի թաղապետարանի աջակցութեամբ: Մաքրման աշխատանքներին մասնակցել են նաեւ յարակից թիւ 38 դպրոցի աշակերտները, որոնք մաքրեցին Գետառի շրջակայքը, իսկ ողջ Գետառը մաքրելու համար գործի էր դրուել ծանր տեխնիկա:

Աստուծոյ նկատմամբ», - ասաց Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեանը:

Կոմունիստական գաղափարախօսութիւնը չէր կարող հանդուրժել հայրենասիրութեան այսօրինակ արտայայտութիւնը, եւ կազմակերպութիւնը տեղափոխուեց Սփիւռք: Շարժումը Հայաստանում վերահիմնադրուել է 1989-ին: 23 տարիների ընթացքում սկաուտներն ամբողջ աշխարհից յաճախ են հանդիպում Հայաստանում՝ բանակումներ, մարզախաղեր անցկացնելու համար: Խորէնը դրանցից շատերին է մասնակցել: Արդէն 9 տարի է հպարտօրէն կրում է սկաուտի վզկապը:

«Բանակումները, ճամբարները ըսկաուտի համար առաջին հերթին հաճոյք են, յետոյ գիտելիք ստանալու եւ գիտելիքը կիրառելու շատ մեծ հնարաւորութիւն», - ասաց Խորէն Ներսիսեանը:

«Հայ սկաուտութիւնը 100 տարեկան է»: այս խորագրի ներքոյ տօնական մի շարք միջոցառումներ են նախատեսուած: Առանցքայինը բանակումն է լինելու Բիւրականում՝ Օգոստոսի 3-11-ը: Մասնակցելու են հայ եւ օտարազգի հարիւրաւոր սկաուտներ՝ ամբողջ աշխարհից:

Գիտաժողովին ելոյթներ ունեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Հրաչ Ծմաւոնեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան (խօսքը տեսնել էջ 3- «Ա.»):



# ԵՂԲԱՅՐՆԵՐ ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ ԵՒ ԱՐՄԱՆՏ ԱԲՐԱՄԵԱՆԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

# 11

Մարտին,  
Մեծի Տանն  
Կիլիկիոյ  
Արամ Ա.  
Կաթողիկոս



կոս «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց եգիպտահայ ազգային-հասարակական վաստակաւոր գործիչ եղբ. տոքթ. Սուրէն Պայրամեանը:

Կաթողիկոսանի մայրավանքին մէջ տեղի ունեցած պարգևատրման հանդիսութեան խօսք առաւ Պէյրուսի «Ազգակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեան:

Գանտահարեան իր խօսքին մէջ անդրադարձաւ տոքթ. Պայրամեանի մատենագիտական պրպտումներուն կարեւորութեան՝ ընդգծելով, որ ան գրական պեղումներու բարձրագոյն մակարդակի լրջութեամբ կարեւոր ներդրում մը ապահոված է եգիպտահայ գրականութեան աղբիւրներու ցանկին պատրաստութեան: Գանտահարեան մեծապէս գնահատեց տոքթ. Սուրէն Պայրամեանի աշխատանքները, որոնք «այժմէական իմաստ կը ստանան այն առումով, որ անոնք առարկայական տուեալներով կը ներկայացնեն ամբողջ ժողովուրդի մը կեանքը իր ելեւէջներով՝ կեդրոնանալով անոր ազգային, քաղաքական, մշակութային, մարզական համընդհանուր գործունէութեան վրայ: ...Ու մենք պէտք ունինք գիտական ուսումնասիրութեան՝ իմանալու համար, թէ ի՞նչ պատճառներով երբեմնի ճառագայթող այդ կազմակերպ գաղութը տակաւ կը նօսրանայ», նշեց Գանտահարեան՝ դիտել տալով, որ տոքթ. Պայրամեանի մատենագիտական աշխատասիրութիւնները կրնան օգտակար դառնալ վաղուան պատմաբանին՝ ճիշդ բնութագրելու համար եգիպտահայ գաղութի պատմութիւնը:

«Ահա թէ ինչու տոքթ. Պայրամեանի վաւերագրական բնոյթի աշխատութիւնը կը ստանայ գիտական համազգային արժէք ու նշանակութիւն, մանաւանդ Միջին Արեւելքի տագնապայի պայմաններուն մէջ ապրող հայահոծ ու կազմակերպ գաղութներուն համար: Մատենագիտական հազարաւոր էջերու մէջ ամփոփուած՝ տագնապները յաղթահարելու, գաղութին անդորրութիւնը պահելու, կազմակերպուելու, համարկուելու եւ այդ հունին մէջ հայօրէն ապրելու եւ ստեղծ

ծագործելու, գոյատեւելու խորունկ փիլիսոփայութիւն, որուն պարզ օրինակը կը գտնենք Պայրամեանի աշխատութեան մէջ. պատիւ արժանաւորին, վարձքը կատար», եզրափակեց Շահան Գանտահարեան:

Հայրական իր խօսքը փոխանցեց նաեւ Արամ Ա. կաթողիկոս: Ան իր կարգին դրուատեց տոքթ. Պայրամեանի անձն ու գործունէութիւնը՝ ընդգծելով, որ «մէկու մը անունը, կենսագրութիւնը

թուղթի վրայ ոչ մէկ արժէք ունին, եթէ այդ անձը նուիրումի ու ծառայութեան ճամբով ինքզինք չէ գտած ու չէ կերտած, ինքզինք չէ արժեւորած հաւաքականութեան, համայնքին ու ընկերութեան մէջ: Տոքթ. Սուրէն Պայրամեանի կեանքը կարելի է բնութագրել հետեւեալ քանի մը բառերով. ամբողջական նուիրում եւ համապարփակ ծառայութիւն», շեշտեց Կաթողիկոսը՝ նշելով, որ եգիպտահայ կեանքի մայր էջին վրայ կը մնայ տոքթ. Պայրամեան: «Ան միշտ եղած է գաղութին հետ, ո՛չ թէ դիտողի, հետեւողի, լսողի կրաւորական վիճակով, այլ՝ մասնակցողի, տագնապողի, առաջնորդի դերով: Ան գաղութին հետ ինքզինք նոյնացուց, գաղութին ցաւը իր ցաւը եղաւ: Գաղութին յաջողութիւնը՝ իր յաջողութիւնը: Ան որ հեռուէն կամ մօտէն կապ ունեցած է եգիպտահայ գաղութին հետ, վստահաբար այսպէ՛ս ճանչցած է տոքթ. Սուրէն Պայրամեանը»:

Շարունակելով, Կաթողիկոսը հաստատեց, որ տոքթ. Պայրամեան խորապէս հաւատացած է մեր եկեղեցւոյ դերին ու առաքելութեան, նաեւ՝ իր պատկանած կուսակցութեան: Իրեն համար ամբողջ գաղութը եղած է իր կուսակցութիւնը: «Հայ գիրն ու գրականութիւնը միշտ եղած են իր սրտին մօտ ու ան երկու հատոր գրած է հայ մանուկին ու ընտանիքին նուիրուած»:

Կաթողիկոսին խօսքէն ետք, Նարեկ Արք. Այիէմեզեան ընթերցեց Հայրապետական կոնդակը, որմէ ետք Վեհափառը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց տոքթ. Սուրէն Պայրամեանը, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնելով նշեց, որ այս պարգևատրումը գնահատական է աւելի յաւելեալ պարտականութիւն մը դրաւ իր ուսերուն, եւ եթէ ինք աւելի քան 45 տարի է ի վեր կը գործէ, ապա անոր





համար երախտապարտ է Եղեռնին ճողոպրած իր ծնողներուն՝ Նարպէյ եւ Սիրանոյշ Պայրամեաններուն, «որոնք հայ գիրի սէրը արթնցուցին մէջս՝ զիս առաջնորդելով դէպի եկեղեցի, դպրոց ու ակումբ, ուր վաստակաւոր մշակներու եւ շրջուն Հայաստաններու հմայքին տակ ստացայ հայեցի կրթութիւն ու ազգային ակնածանք: Նմանապէս, երախտապարտ եմ կողակիցիս՝ Սոնիա Ոսկերիչեանին, առանց որուն զօրակցութեան պիտի չկարենայի իրագործել այս բոլորը: Նոյն հարթակին վրայ, դուստրերուս՝ Սօսէին եւ Սիլվային, որոնք զիս խրախուսեցին: Թող իմ երկու հատորներս ըլլան իմ համեստ լուծմաներս», ըսաւ տոքթ. Պայրամեան եւ աւելցուց. «Աշխատեցայ եւ գործեցի, որովհետեւ ուղեցոյց ունեցայ մեր եկեղեցին: Հաւատաւոր զինուորեայք եղայ այն հայ-

րենապաշտ կազմակերպութեան, որուն ճամբով նուիրումս բերի ազգիս: Կրկնակիօրէն երախտապարտ ու շնորհակալ եմ այս կազմակերպութեան եւ Արամ Ա. Վեհափառ Հօր»:

**ԵՂԲ. ԱՐՄԱՆՏ ԱԲՐԱՄԵԱՆԻ  
ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄԸ**

Նոյն օրերուն, Մեծն Բրիտանիա կատարած իր այցելութեան ծիրին մէջ, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան պարգեւատրեց ազգային-հասարակական կեանքի հանրածանօթ դէմքեր, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի մասնաճիւղի ժրաջան վարչականներէն եղբ. Արմանտ Աբրամեան:

Այս առիթով, եղբ. Աբրամեան արժանացաւ Սփիւռքի նախարարութեան պատուոյ գիրին:

# ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՄԻՋՈՑ՝ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ



**Սեւան Նազարեան  
ՓԱՐԻՉ**

**Հ**.Մ.Ը.Մ-ի անդամներուն եւ համակիրներուն համար տարուան մէջ առիթները բազմաթիւ ու բազմապիսին են իրարու մօտ գալու, նոյն հարցերով մտահոգուելու կամ խոկալու, ժողով գումարելու եւ շինիչ որոշումներ կայացրնելու:

Սակայն, տարին մէկ անգամ, տարբեր միջավայրի մէջ, շքեղ սրահներէ ներս, խրախճանքի միջնուրտի մէջ ապրելու լաւագոյն շարժառիթն է պարահանդէսը:

Փարիզահայութեան համար տարեկան սպասուած թուական մըն է Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պարահանդէսը, որովհետեւ միշտ ալ մտածուած ծրագրով ու անակնկալներով լեցուն կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան առաջարկած այդ ժամերը:

Ի տարբերութիւն այլ տարիներու, այս տարուան պարահանդէսը, որ տեղի ունեցաւ «Մարիոթ» պանդոկի շքեղ սրահներէն ներս, առաջինը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 35-ամեակի ձեռնարկներու շարքին:

Քոքթէյլէն ետք, ներկաները հրաւիրուեցան պարահանդէսի սրահ, ուր պատին վրայ կը ցուցադրուէր պատկերներու փունջ մը, քաղուած՝ մասնաճիւղի 35 տարուան գործունէութենէն, պատաններ՝ «համադամ ճաշ»էն:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան: Եղբայրը ողջունեց ներկաները, միութեան իրենց բերած զօրակցութեան համար, ըլլայ ան նիւթական թէ բարոյական: Ապա, եղբայրը անդրադարձաւ 35-ամեայ մասնաճիւղի նուաճումնե-

րուն, նշելով թէ՛ «հակառակ այն իրողութեան, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը

բազմանդամ մասնաճիւղ մը չէ, սակայն իր կարելին ի գործ դրած է համասփիւռ միութեան բարգաւաճման գործին, իր անդամները յաճախ գործօն մասնակցութիւն ունեցած են ընդհանուր գործին մէջ, մաս կազմած են Կեդրոնական Վարչութեան ու անոր յանձնախումբերուն»:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեան: Եղբայրը շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի ներկայութիւնը սփիւռքեան մեր գաղութներէն ներս, ինչպէս նաեւ անոր հայապահպանման պաշտպան ու զինուոր ըլլալու հանգամանքը:

Երեկոյին անակնկալը սպանական խումբի մը մատուցումն էր. աւելի քան տասը արուեստագէտներ ներկայացուցին այդ մշակոյթին իւրայատուկ եղանակներ: Իսկ սպանական պարի կշռոյթով ելոյթ ունեցաւ հայուհի մը՝ Լոուի Պաղտասարեան, որ յաջողած էր խումբին մօտ ստեղծել նաեւ հայութեան նկատմամբ հետաքրքրութիւն:

Գեղարուեստական բաժինը վստահուած էր Լիբանանէն ժամանած Սեդո Պաղտասարեանի նուազախումբին եւ երգիչ Սարո Փանոսեանին: Հայկական ժողովրդական երգերով ան յաջողեցաւ ձօնացնել երեկոն, որուն խանդավառման իր բաժինը բերաւ նաեւ երգչուհի Շաքէ, իր գեղեցիկ մատուցումով:

Ներկաները մինչեւ ուշ ժամեր միասնաբար ապրեցան հայկական պահեր:

Մինչ 35 տարի առաջ հաւատքով ճամբայ ելած հաւատաւորները մէկ քայլ եւս յառաջացան...



# ԵՒՍ ՄԻ ՀՊԱՐՏԱԼԻՑ ՕՐ «ԱՐԱՐԱՏ»ՈՒՄ

## Թղթակից ԿԼԵՆՏՅԼ


**Կ**իրակի, 25 Մարտին, Հ.Մ.-Ը.Մ-ի Կլենտյլի «Արարատ» մասնաճիւղի յարկի տակ տեղի ունեցաւ հրապարտալից մի ծրագիր: Այդ օրը մասնաճիւղի սկաուտական բաժանմունքն ունեցաւ իր երկրորդ «Eagle Court of Honor»-ը:

Կենտրոնի Պաղտասարեան-Շահինեան սրահը զարդարուել էր համապատասխան նշանաբաններով ու դրոշակներով:

Ծրագրին իրենց մասնակցութիւնն էին բերել Հ.Մ.-Ը.Մ-ի Շրջանային եւ

մասնաճիւղի ղեկավարներ, ըսկաուտ խմբապետներ եւ համայնքի ներկայացուցիչներ, «Boys Scouts of America Verdugo Hills Council»-ի անդամներ եւ ըսկաուտների ընտանիքներ ու սկաուտներ:

Զեւնարկն սկսուեց դրօշակի արարողութեամբ, մասնաճիւղի արի 4 խմբի կատարմամբ, որին յաջորդեց ամերիկեան եւ հայկական հիմները՝ կատարմամբ մասնաճիւղի արենոյշ խմբի խմբապետուհի քոյր Իվանա Գրիգորեանի: Օրուան հանդիսավարն էր Կլենտյլ համայնքի գործօն անդամ՝ «Eagle Scout» Զարեհ Ամիրեանը: Ծրագրի բացման խօսքն ասելիս Զարեհ Ամիրեանն յայտարարեց, որ Հ.Մ.-Ը.Մ-ի Կլենտյլի «Արարատ» մասնաճիւղի արի 4 խումբը այսօրուան «Eagle Court of



Honor»-ը նուիրում է հանգուցեալ քոյր Ռիմա Աբէղի Սաղըրեանի անմոռաց յիշատակին: Քոյր Ռիման լինելով տարիների արենոյշ, իր կեանքի բոլոր մարզերում հետեւել է Հ.Մ.-

Ը.Մ-ի նշանաբանին ու սկաուտական դաւանանքին՝ միշտ սատար կանգնելով սկաուտական բաժանմունքին:

Սահիկների միջոցով ներկայացուեց «Արծիւ» շքանշանը պարգեւատրուող երեք սկաուտների՝ եղբայրներ Քրիստափոր Ալահվերտեանի, Սեւադա Բարսեղեանի եւ Քրիստափոր Սաղըրեանի սկաուտական անցեալը: Ապա, արի 4 խմբի խմբապետ եղբ. Արտո Ղազարեանը նրանց յանձնեց «Արծիւ» շքանշանը եւ պատկան վկայագրերը:

Վկայագրերի բաշխման ընթացքում եղբ. Արտո Ղազարեանը պարգեւատրուող սկաուտներին յորդորում էր հետեւելու սկաուտական խոստման ու դաւանանքին եւ հաւատարիմ մնալ Հ.Մ.-Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին եւ օգնել կրտսեր սկաուտներին հասնելու սկաուտական բարձրագոյն շքանշաններին:

Հ.Մ.-Ը.Մ-ի Կենտրոնական Վարչու-



թեան անունից եղբ. Վիգէն Դաւթեանը շնորհաւորեց պարգեւատրուած ըսկաուտներին եւ շեշտեց հաւատարիմ մնալու Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին: Մասնաճիւղի ատենապետուհի քոյր Հելիկ Իսաղուլեանը եւ վարչուիթեան անդամ եղբ. Հարմիկ Պաղտասարեանը գնահատանքի իրենց խօսքն ուղղեցին սկաուտներին՝ իրենց տարած աշխատանքի համար:

Շրջանային Ընդհ. Խմբապետ քոյր Թալին Հինտոյեանը գնահատեց ըսկաուտներին, որոնք անցնելով դժուարին ճանապարհ հասել են «Արծիւ» շքանշանին:

Պարգեւատրուած սկաուտները գնահատականներ ստացան նախագահ Պարաթ Օպամայի եւ Գալիֆորնիոյ նահանգի ծերակուտական սենատորներ Պոքսրի եւ Ֆէլիթրնի գրասենեակներից: Ներկայացուցիչների Տան անդամ Ատամ Շիֆի կողմից Մէրի Յովակիմեանը երեք սկաուտներին յանձնեց ամերիկեան դրօշակները, որոնք ծածանուել են Ամերիկայի Միացեալ Նահանգների Քոնկրէսի շէնքի վրայ: Էսէմպլիմէն Մայք Կէթթոյի անունից Մէրի Մանուկ-

եանը վկայագրեր յանձնեց սկաուտներին: Յաւելեալ, նրանք յատուկ վըկայագրեր ստացան Լոս Անճելըս գաւառի խորհրդական Մայքըլ Անթոնովիչի գրասենեակից եւ Կլէնտէյլի քաղաքապետարանից:

Նշելի է, որ «Արծիւ» շքանշանը «Boy Scouts of America»-ի ամէնից բարձր տիտղոսն է, որին հասել են արի սկաուտներից միայն 5 տոկոսը: Նրան հասնելու համար սկաուտները պիտի մասնակցեն տարբեր բանակումների եւ ստանձնած լինեն ղեկավարական պաշտօն, առնուազն 12 ժամ կամաւոր աշխատեն համայնքի կազմակերպութիւններում, լրացնեն առնուազն 21 մասնագիտական նշաններ եւ կազմակերպեն ու իրագործեն մի ծրագիր յօգուտ համայնքին:



Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի եւ սկաուտական բաժանմունքի անունից մեր շնորհաւորանքներն ենք ուղղում եղբայրներ Քրիստափոր Ալլասվերտեանին, Սեւադա Բարսեղեանին եւ Քրիստափոր Սաղրբեանին իրենց սկաուտական շարքերում յաջողութեան եւ «Արծիւ» շքանշանի պարգեւատրման համար:

with the complements of

Restaurant Al-Mayass



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## Րաֆֆի Սիլվահեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղի պետական վարչութեան անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ: Ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներ եւ միութենական քոյրեր ու եղբայրներ: Ժողովը բացուած յայտարարուելէ ետք, տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւն: Նախագահ ընտրուեցաւ եղբ. Պօղոս Պալէոզեան, ատենադպիր՝ եղբ. Րաֆֆի Սիլվահեան:

Ժողովին, վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրները ընթերցուելէ ետք, արժարժուեցան միութիւնը հետաքրքրող հարցեր: Ներկայացուեցան առաջարկներ՝ մարզական խումբերու արդիւնքները բարելաւելու համար: Ապա, տեղի ունեցաւ վարչութեան ընտրութիւն: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արտաշէս Փայասեան զնահատեց ընթացաւարտ վարչութեան աշխատանքը եւ շնորհաւորեց նորընտիր վարչութիւնը, միութեան մարզական խումբերը աւելի բարձր դիրքերու վրայ տեսնելու մաղթանքով:

Պետական վարչութեան նորընտիր վարչութիւնը կրեց հետեւեալ պատկերը՝ ատենապետ՝ եղբ. Պօղոս Պալէոզեան, անդամներ՝ եղբայրներ Յարութ Պազգալեան, Սերժ Պալպանեան, Գէորգ Մաւեան, Աբիկ Պասմաճեան, քոյրեր Մարիա Գաբուճեան եւ Երան Պազգալեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՅ  
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ  
Անդամական ընդհանուր



Ժողովին ներկայացուած առաջարկին համաձայն, նորընտիր պետական վարչութիւնը երեք օրերու տեւողութեամբ կազմակերպեց մարզական խորհրդաժողովներ՝ միութեան կիրարկած բոլոր մարզաձեւերու պատասխանատուներուն համար: Խորհրդաժողովները տեղի ունեցան «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ, երեք հանգրուանով: Զորեքշաբթի, 25 Ապրիլին տեղի ունեցաւ թե-

նիսի, ճատրակի, փինկ-փոնկի եւ լողի խորհրդաժողովը, զոր վարեց միութեան երէց եղբայրներէն եղբ. Նշան Օղիկեան: Ուրբաթ, 27 Ապրիլ 2012-ին Փութպոլի խորհրդաժողովը վարեց միութեան վաստակաւոր Փութպոլիտներէն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան, իսկ Երկուշաբթի, 30 Ապրիլ 2012-ին պասքէթի խորհրդաժողովը վարեց վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Պալէոզեան:

Ժողովներու ընթացքին իւրաքանչիւր յանձնախումբի պատասխանատու ամփոփ տեղեկութիւն մը փոխանցեց իր խումբերու աշխատանքներուն մասին, ապա ներկայացուեցան խումբերու ղիմագրաւած դժուարութիւնները: Խօսուեցաւ նաեւ կրտսեր խումբերու նախապատրաստական աշխատանքներու մասին: Խումբերու մարզիչները եւս իրենց խօսքը ունեցան ընթացիկ տարեշրջանի մրցումներուն աւնչութեամբ: Անոնք անդրադարձան իրենց խումբերու ղիմագրա-



## ԵՂԲ. ՍԵՊՈՒՀ ԽԱՐԱՃԵԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱԻԵԼԱԳՈՅՆ ԿԷՏԵՐ ՆՇԱՆԱԿՈՂԸ



լած դժուարութիւններուն, մասնաւորաբար՝ փորձերու յարմար կեդրոններու չգոյութեան:

Ներկաները գնահատեցին այս տարեշրջանին արձանագրուած արդիւնքները, ի մասնաւորի՝ Փութպոլի խումբին արդիւնքները, տրուած ըլլալով որ խումբը այս տարի հանդէս եկաւ առանց օտար մարզիկներու:

Աւարտին, ներկաները կատարեցին մարզախաղերու մակարդակի բարելաման առաջարկներ:

### Թղթակից ՅԱԼԷՊ

Երկու տարի, վերաւոր ըլլալով, պասքէթի դաշտերէն հեռու մնալէ ետք, 2011-2012 տարեշրջանի ախոյեանութեան մրցումներուն, Սուրիոյ երիտասարդական հաւաքականի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ եղբ. Սեպուհ Խարաճեան յաջողեցաւ ձեռք ձգել Սուրիոյ պասքէթի SUPER մրցաշարքի առաւելագոյն կէտեր նշանակողի տիտղոսը,



նշանակելով 216 կէտ: Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հետ իր կատարած ինը մրցումներուն եղբ. Սեպուհ փաստեց, որ ան Սուրիոյ լաւագոյն երիտասարդ խաղացողներէն է եւ արժանի է ամէն տեսակ գնահատանքի:

Նշենք, թէ առաջին անգամը չէ, որ եղբ. Սեպուհ կը տիրանայ առաւելագոյն կէտեր նշանակողի տիտղոսին: Նախապէս, ան նոյն տիտղոսին արժանացած է Սուրիոյ պատանեկան ախոյեանութեան մրցումներուն:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

# Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKER 2005 PARIS

Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS

Select your Journey


Guided Tours for 8 Days or 12 Days



11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com




48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hamrabadoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com





www.PhotoRAFFI.me

# ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ Հ. Մ. Ը. Մ. ԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆ

ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԻՆ  
ԵՒ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ



Թղթակից  
ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

**Կ**իրակի, 27 Մայիսի երեկոյեան, Մայիսեան յաղթանակներու ոգին, հպարտութիւնն ու պայքարով նորանոր նուաճումներ արձանագրելու վճռակամութիւնը անգամ մը եւս թեւաձեցին Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր խրոխտ, հպարտ եւ հաստատ քայլերով սողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին սկաուտներն ու մարզիկները, դողդոջ մոկլիներէն մինչեւ ալեհեր ու վաստակաւոր վեթերանները: Տողանցեցին նաեւ ԼԵՎԱՄ-ի մրցումներ

րուն մասնակցած աշակերտները, վաղ-  
լան կայտառ ու առողջ սերունդի ներ-  
կայացուցիչները:

Հայուլթեան, Հայաստանի ու Արցա-  
խի տեսլականներով հասակ նետած  
տարբեր սերունդներ չէին կրնար այդ օր  
հպարտ չըլլալ, անկախութիւն կերտած  
մեծերու աւանդին հաւատարիմ չըլլալ,  
Սարգարապատի գանգերու ղօղանջին  
հետ ոտքի կանգնելու պատրաստ չըլլալ,  
այն պահուն երբ անոնք կը տողանցէին  
հազարաւոր լիբանանահայերու դիմաց,  
սկառտական ձեռային աշխատանքով  
պատրաստուած Սարգարապատի յու-  
շակութողի մանրակերտին ներքեւ:

Հայաստանի անկախութեան 94-ամ-  
եակին եւ Շուշիի ազատագրութեան 20-  
ամեակին նուիրուած Մայիսեան փա-  
ռատօնը վայելեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնա-  
կան Վարչութեան հովանաւորութիւնը  
եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ  
Գեղամ Արք. Խաչերեանի նախագահու-  
թիւնը: Փառատօնին ներկայ գտնուե-  
ցան լիբանանահայ պետական նախա-  
րարներ, երեսփոխաններ, հայ առաքե-  
լական, կաթողիկէ եւ աւետարանական  
հոգեւոր պետեր, ազգային-կուսակցա-  
կան մարմիններու ներկայացուցիչներ,  
Այնճարի եւ Պուրճ Համուտի քաղաքա-  
պետներ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական եւ  
Շրջանային Վարչութիւններու ներկայ  
եւ նախկին անդամներ, վարժարաննե-  
րու տնօրէններ, հիւրեր եւ ստուար թի-  
ւով համակիրներ:



www.PhotoRAFFI.me

**ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ**

Օրուան բացման խօսքը արտասանեց  
փառատօնի կազմակերպիչ Շրջանային  
Վարչութեան ատենադպիր եղբ. Հայկ  
Թապագեան: Եղբայրը Հ.Մ.Ը.Մ-ի  
առաքելութեան եւ նպատակին անդրա-  
դառնալով յայտնեց, որ միութիւնը մե-  
ծապէս սատարեց ազգապահպանման  
գործին, ներդրում ունեցաւ հայր հայ  
պահելու առաքելութեան: Օտար ափե-  
րուն վրայ ան ստեղծեց փոքրիկ Հայաս-  
տան, արհաւիրքէն նոր դուրս ելած ժո-  
ղովուրդին տուաւ յոյս եւ ուրախու-  
թիւն:

Եղբ. Թապագեան դիտել տուաւ, որ  
իր գոյութեան ներկայ պատուաբեր  
հանգրուանին հասնելու համար, Հ.Մ.-

Ը.Մ. երկար ճամբայ կտրեց եւ Հայաս-  
տանի, Արցախի ու հայուլթեան համար  
նուիրաբերեց իր ամէնէն լաւ տարրերը:  
Այսօր, ան կը շարունակէ մնալ պատնէ-  
շի վրայ՝ դիմագրաւելով գանազան տե-  
սակի մարտահրաւէրներ:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**


Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբա-  
նանի Շրջանային Վարչութեան ատենա-  
պետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Եղբայրը  
հիմնական նկատեց այն հանգամանքը,  
որ սարսափի ու պատերազմի օրերուն  
ծնունդ առած այս միութիւնը՝ հայրե-  
նիքէն հազարաւոր մղոններ հեռու  
գտնուելով, հայրենագուրկ հայ մանու-  
կին, պատանիին եւ երիտասարդին սոր-  
վեցուց հայրենիքի սէրն ու հայ մնալու  
գաղտնիքը:

Եղբ. Քէշիշեան կոչ ուղղեց նոր սե-  
րունդին՝ տէր կանգնելու իրեն փոխան-  
ցրած աւանդին, հաւատարմութեամբ  
բարձրանալու եւ իրեն հետ բարձրացնե-  
լու համայն հայութիւնը, որ իւրաքան-  
չիւր Հ.Մ.Ը.Մ-ականէ կ'ակնկալէ բացա-  
ռիկ զոհողութիւններ, որովհետեւ ներ-  
կայ պայմաններուն մէջ բացառիկ ճիգե-  
րով միայն կարելի է նորանոր նուաճու-  
մեր արձանագրել (Եղբոր խօսքին ամ-  
բողջութիւնը տեսնել էջ 7-8):

**Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻՆ ԽՕՍՔԸ**

Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կո-  
միտէին խօսքը արտասանեց եղբ. Վիգէն





www.PhotoRAFFI.me



www.PhotoR

Աւագեան: Ան նշեց, որ հաւատքի եւ յոյսի տօնն է Մայիս 28-ը: Հաւատք, որ անկարելի կարծուածը կարելի կը դառնայ, երբ մեր ժողովուրդը, միակամ ու անսասան, կը վճռէ գերագոյն գոհաբերութիւններու գնով հետապնդել իր ազատ ու անկախ գոյութեան իրաւունքին ձեռքբերումը: Հաւատք, որ մեզի կուտայ սեփական ուժերուն ապահովելու քաղաքական հասունութիւն, պատմական անարդարութիւնները սրբագրելու կամք, միջազգային քաղաքական ասպարէզին մէջ պայքարելու վճռականութիւն եւ ազգային պետականութիւն ստեղծելու հրամայական:

Եղբ. Աւագեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Շուշիի ազատագրման 20-ամեակին: Ան ըսաւ, որ պայքարով, արեամբ եւ հերոսական խենթութեամբ ազատագրուած Շուշին վերահաստատեց անհերքելի այն ճշմարտութիւնը, թէ՛ սեփական արժանապատուութիւն եւ կռուելու կամք ունեցող ժողովուրդն է, որ միայն կրնայ իրաւունքներ եւ հատուցում ստանալ: Շուշին երաշխաւորեց հայ ժողովուրդին մեծագոյն նուաճումը՝ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան գոյութիւնն ու յառաջընթացը:

Եղբ. Աւագեան ընդգծեց, որ Մայիսեան յաղթանակները հանդիսացան հայութիւնը ինքնաճանաչման մղող գլխաւոր ուղին: Հայութիւնը միշտ պիտի յիշէ Սարգարապատն ու Շուշին կերտող հերոսները ու միշտ պիտի խոնարհի անոնց առջեւ, որպէսզի անոնցմէ առնէ իր կենսունակութեան աւիշը, ապրելու եւ գոյատեւելու կամքը, հաւատքը՝ իր ներկային ու ապագային նկատմամբ:

**Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առաւ եղբ. Կարպիս Գապասագալեան եւ նշեց այն իրողութիւնը, որ պատմական ճակատագրական հանգրուաններուն դրսեւորուած յանդգնութեան եւ խիզախութեան շնորհիւ, այսօր, կարելի է ճակատարաց ու խրոխտ կանգնիլ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Ան աւելցուց, որ պատմութիւնը արժեւորելու ու անկէ դասեր քաղելու կոչուած է հայութիւնը:

Եղբ. Գապասագալեան դիտել տրուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր ստեղծումէն ի վեր դէմ յանդիման կանգնած է բազմաթիւ դժուարութիւններու եւ մարտահրաւէրներու՝ ընդմիշտ վերցնելով իրեն նետուած ձեռնոցը եւ քալելով առաջ: Իր


խօսքին մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիրը անդրադարձաւ Հայ Դատին ու պահանջատիրութեան՝ մերօրեայ իրականութեան մէջ. ան հաստատեց, որ հայ ժողովուրդը կառչած կը մնայ իր իրաւունքներուն, չի տկարանար եւ զիջումներ չի կատարեր:

Եղբ. Գապասագալեան լուսարձակի տակ առաւ Շուշիի ազատագրութեան 20-ամեակը՝ հաստատելով, որ հայութեան համար ամեակներու յիշատակումը ազգային ուրոյն գիտակցութեան մկրտութեան օր է: Ուստի, հայութենէն կ'ակնկալուի առողջ եւ գիտակից զգացողութեամբ շարունակել երթը՝ միշտ յանձնառու մնալով իր առաքելութեան (Եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 6-7):



www.PhotoRAFFI.me





**ԼԵՎԱՄ-Ի ՎԱՀԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

Խօսքերէն ետք տեղի ունեցաւ ԼԵՎԱՄ-ի 2011-2012 տարեշրջանի վահաններու տուչութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանի, Հայկազեան համալսարանի նախագահ վեր. Փօլ Հայտոսթեանի եւ Շրջանային Վարչութեան մօտ ԼԵՎԱՄ-ի ներկայացուցիչ եղբ. Վահան Համամճեանի ձեռամբ:

Նախակրթարանի բաժնի վահանին տիրացաւ Հայ Աւետ. Կերթմենեան վարժարանը, միջնակարգի՝ «Թուհնոց Բոյն»ը, իսկ երկրորդականի՝ Համագգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը:

ԼԵՎԱՄ-ի մասնակցող աշակերտներէն «Լաւագոյն մարզիկ»ի բաժակին տիրացաւ Համագգայինի Մելանքթոն

եւ Հայկ Արսլանեան ճեմարանէն Սարհատ Կեթսեմանեան, «Լաւագոյն մարզիկուհի»ի բաժակին՝ Լոուի Թաշճեան: Յատկանշական էր, որ այս տարեշրջանին ԼԵՎԱՄ-ի խաղերուն մասնակցած էին 25 դպրոցներէ շուրջ հազար աշակերտներ:

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԸ**

Այնուհետեւ, սկսուեցաւ կողմէ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն ընդմէջէն ներկայացուեցաւ հայօրէն մարտնչելու անոնց պատրաստակամութիւնը, մեր հերոսներուն մղած պայքարը եւ կերտած յղթանակները: Յուզիչ եւ գեղեցիկ էր աւարտը, երբ Եռագոյնը ծածանեցաւ դաշտին վրայ եւ իր խորհրդաւորութեամբ ողողեց մթնոլորտը:

Յաջորդեց բոլորին կողմէ սպասած տողանցքը, ուր յաղթական քայլերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերու սկսուածներն ու մարզիկները: Տողանցեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆութպոլի ակադեմիայի կրտսերները եւ ներկայացուցչական խումբերու մարզիկ-մարզիկուհիները: Ստուար շարքերով տողանցին մասնակցեցան նաեւ լիբանանահայ վարժարաններու աշակերտները՝ արժանանալով ներկաներու գնահատական ծափերուն: Երկրի քաղաքական-ապահովական ծանօթ պայմաններուն բերումով, տողանցէն բացակայեցան հեռակայ շրջաններու՝ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի, Զահլէի եւ Թրիփոլիի սկսուածներն ու մարզիկները: Զգալի եղաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի շեփորախումբին բացակայութիւնը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի թռիչքով եւ պայքարով անգամ մը եւս կը բարձրանանք դէպի հայ ժողովուրդի բարձունքները՝ փաստելով, որ հայ ժողովուրդի անմահ ոգին կ'ապրի Մայիսեան փառքերով:

Ապա, Սրբազանը անդրադարձաւ երեք հիմնական թուականներու եւ դէպքերու՝ Վարդանանց, Մայիս 28 եւ Շուշիի ազատագրութիւն՝ հաստատելով, որ անոնց միջեւ գոյութիւն ունեցող հասարակ յայտարարը հայ ժողովուրդին մօտ պայքարի փայլատակումն





էր, պայծառակերպութիւնը, յաղթանակի ոգին եւ հայ զինուորին վճռակամութիւնը: Ան դիտել տուաւ, որ 1918-ին ոչ միայն հայ ժողովուրդը հաստատեց, որ ինք գերեզմանուելու կոչուած ազգը չէ, այլեւ՝ յաղթանակի դրօշը բարձր ու հպարտ ծածանեց:

Առաջնորդ դիտել տուաւ, որ երեք պայքարներուն ալ մարդկային միտքը անկարող էր հաւատարու, որ կարելի է յաղթանակ կերտել, սակայն այդ մէկը

կարելի դարձաւ շնորհիւ հայ ժողովուրդի յարատեւութեան հաւատացող «խենթերուն», որոնք հնարք գտան:


Գեղամ Արք. Խաչերեան ապա խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի մասին, որ սերունդներ ամբողջ մօտեցուց Մայիս 28-ին, անոնց ըմպել տուաւ Մայիսեան յաղթանակի բաժակէն, մնաց ուխտապահը Մայիսեան յաղթանակին՝ միշտ քալելով այդ սկզբունքով եւ փայլատակումով:

«Հ.Մ.Ը.Մ-ը ամբողջ Սփիւռքի վրայ

Եռագոյնը ծիածանեց. Եռագոյնը դարձաւ մեր երկինքը, եւ ո՞ր սերունդը չի հայանար, երբ իր գլխուն վերեւ Եռագոյն կայ», նշեց ան:

Իր խօսքը եզրափակելով, Գեղամ Արք. Խաչերեան յայտնեց, որ Վարդանանցէն Սարգարապատ ու Շուշի քաղաք հայութիւնը, իսկ այսօր կը պատրաստուի քալելու դէպի Արարատ:


Փառատօնին աւարտին տեղի ունեցաւ հրավառութիւն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...



www.europehotel.am

Reservations

Yerevan 32-38, Hanrabedoutian Street, Yerevan 375010, Armenia Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50 sales@europehotel.am

Studio/TKEN 2005 PARIS

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՆՁՆՈՒՄ ՌԱՌԻՏԱՅԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՄԱՍՆԱԳԻՂԻՆ

## Թղթակից ՌԱՌԻՏԱ



Հինգշաբթի, 24 Մայիս 2012-ի երեկոյեան տեղի ունեցաւ միութեան դրօշին պաշտօնական յանձնումը Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի նորաստեղծ մասնաճիւղին:

Արարողութիւնը տեղի ունեցաւ Ռաուտայի «Շուշի» ակումբին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Հ.Յ.Դ. «Շուշի» կոմիտէին, Շրջանային Սկաուտական Խորհուրդին, Շրջանային խմբապետական կազմին, Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի վարչութեան եւ մասնաճիւղի անդամներուն:

Արարողութիւնը ընթացք առաւ շրջանի ծխատէր քահանայ Սեւակ ՔՏՆՅ՝ Վասիլեանի աղօթքով եւ միութեան դրօշին ու Հ.Մ.Ը.Մ.Ի ծրագիր-կանոնագիրին օրհնութեամբ:

Խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ շնորհակարտեց Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի 10-րդ մասնաճիւղին ստեղծումը՝ յաջողութիւն մաղթելով վարչութեան ծրագիրներուն: Ապա, ան միութեան դրօշն ու ծրագիր-կանոնագիրը յանձնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի վարչութեան ատենապետ եղբ. Կիրակոս Գարակէօզեանին:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԻ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ՝ ՌԱՌԻՏԱՅԻ ՄԷՋ

## Թղթակից ՌԱՌԻՏԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Պէյրութի արուարձաններէն Ռաուտայի Հ.Յ.Դ. «Շուշի» ակումբին մէջ տեղի ունեցաւ հանդիպում-զրոյց մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի վեթերան ֆուտպոլիստներու, Հ.Մ.Ը.Մ.Ի ակաւն ֆուտպոլով հետաքրքրուած պատասխանատուներու եւ յատուկ հրահրեալներու մասնակցութեամբ:

Հանդիպումին սկիզբը, ներկաներուն բարի գալուստ մաղթեց Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Հայկ Թապազեան: Ան անփոփ ձեւով ներկայացուց յառաջիկային առնուելիք քայլերը, որոնք պիտի նպաստեն Հ.Մ.Ը.Մ.Ի ակաւն ֆուտպոլի յառաջխաղացքին:

Եղբ. Թապազեան յայտնեց, որ Ռաուտայի հանդիպումը կը հանդիսանայ երկրորդը «Սարդարապատ» ակումբին մէջ տեղի ունեցած առաջին հանդիպումէն ետք:

Ապա, խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Ռաուտայի նորաստեղծ մասնաճիւղին, որ հանդիպումէն բացի ընթրիքի իր հիւրը ըրաւ ներկաները:

Եղբ. Քէշիշեան ընդհանուր գիծերով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի ակաւն ֆուտպոլին ներդրումը լիբանանեան մարզական կեանքին: Ապա, ան իր կարգին ներկայացուց Շրջանային Վարչութեան մշակած ծրագիրները, մանաւանդ որ յառաջիկային իւրաքանչիւր մարզ (ֆուտպոլի դաշտ, ֆուտպոլի ակադեմիա, ներկայացուցչական խումբեր) պիտի ունենայ իրեն յատուկ յանձնախումբը: Բոլոր յանձնախումբերը իրենց տեղեկագիրները պիտի փոխանցեն ֆուտպոլի կեդրոնական յանձնախումբին, որ պիտի հետեւի տարուելիք աշխատանքներուն եւ անհրաժեշտութեան պարագային՝ պիտի սրբագրէ նկատուած թերութիւնները:

Այս առիթով, եղբ. Քէշիշեան շնորհակալութիւն յայտնեց վեթերան ֆուտպոլիստներուն, որոնք միշտ պատրաստակամութիւն կը յայտնեն իրենց կարելիութեան սահմաններուն մէջ օժանդակելու իրենց սիրելի միութեան, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.Ի



Ը.Մ.ական ֆուլթայուրը գտնէ երբեմնի իր փառքի օրերը:

Այնուհետեւ խօսք առաւ Ռաուտայի Հ.Յ.Դ. «Շուշի» կոմիտէի ներկայացուցիչ Պետիկ Ծառուկեան: Ան յայտնեց, որ թէեւ Ռաուտայն անցեալին լաւ խումբեր տուած է Հ.Մ.Ը.Մ-ին, սակայն շրջանը անով պիտի չբաւարարուի եւ ապագային եւս իր կարելին պիտի տայ ո՛չ միայն ֆուլթայուրի մարզին, այլեւ՝ սկաուտութեան, փինկ փոնկի եւ ճատրակի մարզաձեւերուն մէջ:

Ծառուկեան ըսաւ, որ Ռաուտա ինքզինք բախտաւոր կը զգայ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի 10-րդ, իսկ աշխարհի 103-րդ մասնաճիւղը ըլլալուն համար:

Ապա, ներկաներուն առիթ տրուեցաւ փոխանցելու իրենց սրտի խօսքերը: Ներկայ վեթերան եղբայրներէն խօսքեր ար-

տասանեցին Յովհաննէս Յուսամեան (Ճոքի), Զաւիկ Գալֆայեան, Դրօ Քէչէեան, Սեպուհ Պապիկեան, Լիբանանի ֆուլթայուրի ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ Համբիկ Միսաքեան եւ ուրիշներ: Եղբայրները իրենց խօսքերուն մէջ անդրադարձան անցեալին կատարուած սխալներու եւ շեշտը դրին այն իրողութեան վրայ, որ անցեալի սխալներուն էջը պէտք է փակել եւ ապագային նայիլ նոր մօտեցումով: Հարկ է մոռնալ կատարուածը եւ նոր սերունդը դաստիարակել, որպէսզի գիտնան բառին բուն իմաստով, թէ ի՞նչ կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ, ընդգծեցին անոնք:

Աւարտին, ներկաները հանդիպում-գրոյցը նկատեցին շատ օգտակար եւ փափաքեցան մօտիկ ապագային դարձեալ համախմբուիլ, ինչ որ Շրջանային Վարչութեան նպատակն է:

# ՔՈՅՐ ՆՈՒԼ ՔԷՇԻՇԵԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԼԻՐԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻՆ



Քֆարշիմա):

Նշենք, որ տղոց առաջնութեան

տիտղոսին տիրացաւ Ռաշիտ Պրպպօ՝ պարտութեան մատնելէ ետք Ռիատի Պէյրութի իր խմբակիցը՝ Մոհամմէտ Հապաշը, 3-2 արդիւնքով (10-12, 11-5, 7-11, 11-4 եւ 11-6): Երրորդ հանդիսացան եղբ. Աւօ Մունջօղլեան (Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ) եւ Ժոզէֆ Շալհուպ (Ռիատի Պէյրութ):

Աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն՝ ներկայութեամբ փինկ-փոնկի Լիբանանի ֆետերասիոնի նախագահ եւ Լիբանանի ողիմպիական կոմիտէի անդամ Սելիմ Հաթ Նիքոյալի:


## Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Մայիսին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը մարզական իր իրագործումներու շարքին աւելցուց նոր մը, երբ Հ.Մ.Ը.Մ. Պէյրութէն քոյր Նոէլ Քէշիշեան տիրացաւ Լիբանանի բաժակի առաջնութեան:

Բաւական հետաքրքրական ճակատումէ մը ետք, Լիբանանի ախոյեան եւ թիւ 1 դասուած մարզիկ քոյր Նոէլ Քէշիշեան 3-2 արդիւնքով (11-7, 9-11, 7-11, 11-4 եւ 11-4) պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Ռիթա Պսէյպէսը (Ժամհուր):

Երրորդ դիրքը զբաւեցին քոյր Լարա Քէչէպաշեան (Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ) եւ Հայա Ուահպի (Ատապ Ուալ Ռիատա)

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄՆԱՐԸ



## Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի խմբապետական կազմը 12-13 Մայիսին կազմակերպեց դաստիարակչական երկօրեայ սեմինար մը Այն Ար շրջանի «Մարիա Փօլի» հանգստարանին մէջ: Սեմինարին մասնակցեցան մասնաճիւղի խմբապետական կազմէն 15 քոյր-եղբայրներ:

Սեմինարը ընդգրկեց սկսողական, դաստիարակչական, կազմակերպչական, ընդհանուր զարգացման այլազան նիւթեր:

Լիբանանահայութեան եւ սուրիահայութեան իրավիճակին մասին խօսեցաւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունի:

Ներկայացուցեցան յայտագիր մը ներկայացնելու ձեւերուն, կանոնագրային պարտաւորութիւններուն եւ պարտականութիւններուն, Հ.Մ.Ը.Մ-ի ժողովներու ձեւերուն եւ օրէնքներուն վերաբերող նիւթեր: Դասախօսներն էին՝ եղբայրներ Յակոբ Չպլաքեան, Սեդա Պէչլեան, Ֆէտի Թափրա, Ֆուատ Մուրատեան, մեթր ժեռար ժերմենոս եւ Ֆետերասիոնի խմբապետ Պահաա Դիմանի:

Երկօրեայ սեմինարին մասնակիցները առաւելագոյն ձեւով օգտուեցան իրենց մատուցուած նիւթերէն եւ ընկերային մթնոլորտով անցուցին անմոռանալի ժամեր:



Սեմինարը փակուեցաւ վկայագիրներու բաշխումով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



## ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՊՐԱԿԱԴՐՄԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՃԻՒՆԻԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՁ

### Թղթակից ճիւղեր

**Հ**.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 6 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ-ի Ճիւղի ակումբին լէճ տեղի ունեցաւ խմբապետական վերաորակաւորման միօրեայ սեմինար՝ երկու բաժանումով. առաջինը՝ փոխ խմբապետներու եւ խմբա-

պետներու, իսկ երկրորդը՝ միաւորի եւ մասնաճիւղերու խմբապետներու յատուկ դասախօսութիւններով եւ գործնական աշխատանքներով:

Սեմինարը սկսաւ առաւօտեան ժամը 7.30-ին, «Յառաջ, նահատակ» քայլերգով, որմէ ետք Շրջանային խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեան կատարեց բացման խօսքը, փոխանցելով սեմինարին նպատակն ու կարեւորութիւնը:

Սեմինարին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերէն Պէյրութի, Պուրճ Համուտի, Ժըտէյտէի,

Ճիւղի, Այնճարի, Անթիլիասի եւ Զահլէի մասնաճիւղերու փոխ խմբապետ եւ աւելի բարձրաստիճան պատասխանատուները: Մասնակիցներուն փոխանցեցան սկսողական, կազմակերպչական, մանկավարժական եւ հոգեբանական նիւթեր, որոնք ներկայացուցեցան Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետներու, նախկին խմբապետներու եւ Լիբանանի սկսողական Ֆետերասիոնի անդամ խմբապետներու կողմէ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒԹՊՈՂԻ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ԵՒ ՀԵԾԵԼԱՆԻՈՐԴՆԵՐԸ ՅԱՐԳԱՆՔԻ ԻՐԵՆՑ ՏՈՒՐՔԸ ԿԸ ՄԱՏՈՒՑԵՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Հ**այկական Յեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչումներու ծիրին մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի Փուլթայոյի դպրոցի շուրջ հարիւր սաներ ուղղուեցան Պիքֆայա, ուր իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին՝ խոստանալով հայօրէն ապրիլ եւ շարունակել անոնց կիսատ ձգած գործը:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենադպիր եղբ. Հայկ Թապագեան: Ան դիտել տուաւ, որ հակառակ ամէն տեսակ դժուարութեան ու անարդարութեան, հայութիւնը կարողացաւ շարունակել վերապրումի իր երթը: Հակառակ անոր, որ թուրքը մէկուկէս միլիոն զոհ խլեց հայ ժողովուրդի զաւակներէն, բռնի կերպով հայութիւնը հեռացուց իր պատմական հողերու մեծ մասէն եւ մինչեւ այսօր կը մերժէ խոստովանիլ իր ոճիրը, գոյութիւն ունին սակայն հայու զաւակներ, որոնք գիտակից են իրենց իրաւունքին, ընկրկում չեն ճանչնար իրենց պահանջատիրութեան մէջ եւ պայքարը կը շարունակեն մինչեւ արդար հատուցում:

Հայկ Թապագեան հաստատեց, որ հայութեան գոյութիւնը մեծ հարուած մըն է թուրքին: Հայերէն խօսելով, գրելով, երգելով այս հարուածը կրկնակի կը դառնայ, որովհետեւ ձախողած կ'ըլլայ հայութիւնը բնաջնջելու թուրքին ծրագիրը:



Իր խօսքին աւարտին, եղբ. Թապագեան կոչ ուղղեց Փուլթայոյի սաներուն ապրելու եւ գործելու այնպէս, որ նահատակներու անէծքին արժանի չըլլան:

Ներկայ մարզիկներուն իր պատգամը փոխանցեց նաեւ Յարութ Սրկ. Շերնէզեան: Հայութեան գոյերթին անդրադառնալով, ան կոչ ուղղեց Փուլթայոյի սաներուն ըլլալու հարազատ ժառանգորդը մեր


նահատակ սերունդին, սիրելու հայոց լեզուն, հայկական արժէքները եւ տէր կանգնելու մեր ինքնութեան:

## ՆԱԵՒ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԵԾԵԼԱՆԻՈՐԴՆԵՐԸ

Եղեռնի նահատակաց յարգանքի իրենց տուրքը մատուցեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի հեծելանորդները, որոնք Պուրճ Համուտէն Պիքֆայա ուղղուեցան քշելով: Պիքֆայա հասնելով, անոնք ծաղիկներ գետեղեցին Հայկական Յեղասպանութեան նուիրուած յուշակոթողին առջեւ: Հեծելանորդներուն ընկերակցեցան հեծելարշաւի Լիբանանի ֆետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Մատուրեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Նազօ Հապիպեան:


Օրուան պատգամը փոխանցեց եւ հայութեան կառչած մնալու, Հայ Դատի հետապնդման համար ջանք չինայելու, հայօրէն ապրելու ու գոյատեւելու կոչ ուղղեց եղբ. Նազօ Հապիպեան:

Նշենք, որ նախքան Պիքֆայա ուղղուելը, Հ.Մ.Ը.Մ-ական հեծելանորդները այցելեցին Անթիլիասի Նահատակաց մատուռ եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին:



# ՀԵՌԱՅԱՒ՝ Հ.Մ.Ը.Մ.ԷՆ ԱՌԱՆՑ ԿՇՏԱՆԱԼՈՒ

(ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻԱԳԵԱՆԻՒ՝  
«ԷՄՄԻ»Ի ՅԻՇԱՏԱԿԻՆ)



## Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

**75**-ը անց ծերուկ մըն էր արդէն, երբ ծանօթացանք իրարու: «Էմմի» կը կոչէին զինք: Քուէյթի «Էմմի»ն էր ան, «Մարգրիկ»ի լուսանկարիչն ու ցրուիչը: Ժիր ու ժպտուն ծերուկ մը, ամբողջութեամբ կեանքով լեցուն: Բոլորը կը սիրէին ու կը յարգէին զայն: Ազնիւ էր իր նկարագրով, զուարթախոճ՝ իր բնաւորութեամբ: Յուշերու եւ յիշատակներու իր տոպրակը լեցուն էր հեռաւոր անցեալի բազմաթիւ դէպքերով: Կարելի չէր չհիանալ իր թաւ ու ոլորուն պէխերուն, որոնք հմայիչ տեսք մը կու տային իրեն՝ Սասնոյ լեռներէն նոր իջած մարդու մը տպաւորութիւնը ձգելով դիմացինին վրայ:

«Էմմի»ն եղբ. Յովհաննէս Աւագեանի ծածկանունն էր: Քուէյթ այցելել եւ «Էմմի»ն չտեսնել համազօր էր Երուսաղէմ այցելելու եւ Յարութեան եկեղեցին չտեսնելու: Ուր որ էր ան՝ անպայման կը գտնէր գաղութը այցելողները: Կը ծանօթանար ու կը ծանօթացնէր ինքզինք: Անձնական քարթը կը փոխանցէր եւ յիշատակի նկարով մըն ալ կ'անմահացնէր իր հանդիպումը:

Այդպէս եղաւ մեր առաջին հանդիպումը 1998-ին, Քուէյթի մէջ: Շուտով բարեկամներ դարձանք, մանաւանդ որ երկուքս ալ կը կրէինք միեւնոյն մականունը, առանց ծանօթներ ըլլալու իրարու: Մեր հանդիպումները հետագային կրկնուեցան «Մարգրիկ»ի խմբագրատան մէջ, ուր ան յաճախ կ'այցելէր՝ Քուէյթէն իր սեփական ինքնաշարժով մինչեւ Պէյրութ քչելով: Ամէն անգամուն նոր բան մը ունէր պատմելիք, նկար մը ունէր փոխանցելիք, պարտաճանաչ միութենականի իր յանձնառութեան գիտակից:

«Մէկը ինչպէս տարիներով օրիորդի մը կը սիրահարի, կ'առնէ կամ ոչ, ես ալ Հ.Մ.Ը.Մ.ին սիրահարած եմ եւ առա՛ծ եմ զայն», կը խոստովանէր ան առիթով մը: «Էմմի»ն իր ողջ էութեամբ սիրահարած էր Հ.Մ.Ը.Մ.ին, առանց սէրը կարենալ յագեցնելու: «Ես տարիներէ կ'ուտեմ Հ.Մ.Ը.Մ.ի ծառէն, առանց կշտանալու անկէ», կը կրկնէր ան:

Յետ-եղեռնեան առաջին սերունդի ներկայացուցիչներէն էր «Էմմի»ն: Մէկը, որ ցմրուր ճաշակած էր աստանդական հայու ճակատագրին բոլոր դառնութիւնները: Ծնած էր Հալէպ, 1924-ին: Դեռ նորածին, փոխադրուած էր Լիբանան, Էջ-

րէֆիէ, ապա ծնողքին հետ հաստատուած էր Ջահլէ: Հոնկէ՛ ուսանելու համար մեկնած էր Կիպրոս, Մելգոնեան վարժարան:

Բ. Աշխարհամարտը պատճառ դարձած էր, որ երիտասարդ Յովհաննէսը ուսումը կիսատ ձգելով վերադառնայ Լիբանան եւ իբրեւ թարգման ծառայէ Պէյրութ հաստատուած անգլիական զօրամասին մէջ: Ապա, պայմաններու բերումով, ան փոխադրուած էր Պաղեստին, դարձեալ անգլիական բանակին ծառայելու համար: 1948-ին, Պաղեստինի տագնապէն ետք, ան վերադարձած էր Ջահլէ եւ կազմած էր ընտանեկան իր բոյնը:

1953-ին, եղբ. Յովհաննէս վերջնական կայք կը հաստատէր Քուէյթ, երբ արաբական այս երկրին մէջ հազիւ եօթը հայ ընտանիք կար: Երկիրը անապատ էր. ո՛չ եկեղեցի կար, ո՛չ դպրոց, ո՛չ ալ աղուք: Ժամանակ պէտք էր, որ պէսզի գաղութը կազմաւորուէր, ինքզինք կազմակերպէր եւ ներկայի իր դիմագիծը ստանար: Եղբ. Յովհաննէս եւ սերնդակիցները հայ մարդու իրենց ջանասիրութեամբ ոչինչէն պիտի կերտէին ամէն ինչ, հայ մարդու տոկունութեան եւ պարկեշտութեան օրինակը տալով Քուէյթի ժողովուրդին եւ պետութեան:

Քուէյթի մէջ, 1955-ին, հաճելի պատահարով մը, աղօթքով եւ... օղիով եղբ. Յովհաննէս պիտի մկրտուէր «Էմմի» ծածկանունով եւ այնուհետեւ իր համբաւը պիտի տարածուէր իբրեւ գլխաւոր հօրեղբայր, գուրգուրոտ հայր եւ մեծ հայր:

Հ.Մ.Ը.Մ.ին հետ «Էմմի»ին ծանօթութիւնը պիտի ըլլար շատ կանուխ: Տասը տարեկանին ան Հ.Մ.Ը.Մ.ին պիտի անդամակցէր Ջահլէի մէջ: Քանի մը տարի սկստական շարքերու ծառայելէ ետք, ան մաս պիտի կազմէր Հ.Մ.Ը.Մ.ի Ջահլէի ֆութպոլի խումբին, իբրեւ բերդապահ: Պաղեստին գտնուած միջոցին, 1942-1948, ան պիտի կրէր Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի, Եաֆայի եւ Երուսաղէմի ֆութպոլի խումբերուն շապիկները:

Քուէյթի մէջ, «Էմմի»ն մեծ նուիրումով պիտի փարէր ազգային-միութենական կեանքին: 1983-ին, Քուէյթի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը յառաջացումէն ետք, ան պիտի հանդիսանար անոր հաւատաւոր անդամներէն: Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներուն մնայուն նկարիչը: Փորձառու նկարիչի իր ոսպնեակով ան պատմութեան պիտի յանձնէր Քուէյթի հայութեան մարզական կեանքը փաստագրող հազարաւոր նկարներ:

(Շար.ը՝ էջ 40)

# ԱՐԾԻՒՆԵՐՈՒ ԿԵՐԱԾՆՈՒՆԴԸ



**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԵՅՐՈՒԹ**

**Ա**րծիւները, որոնք մօտաւորապէս 70 տարի կ'ապրին, կը նկատուին թռչնագ-գիներու ամէնէն երկարակեաց թռչուն-ները: Երբ կը հասնին քառասուն տարե-կանին՝ կը ստիպուին տալու լուրջ եւ դժուարին որոշում մը:

- Պիտի շարունակե՞ն ապրիլ թէ պիտի պարտուին մահուան:

Պատճառը այն է, որ այս տարիքին արծիւին մարմի-նը կը կորսնցնէ իր ճկունութիւնը եւ կը տկարանայ: Կտուցը կը կարծրանայ ու բոլորովին կը կորանայ դէպի լանջքը: Թեւերը կը կարծրանան եւ թեւաբախումները կը կորսնցնեն իրենց ուժը:

Արծիւը պէտք է կատարէ իր ընտրութիւնը. կա՛մ մահ-ւան պիտի դատապարտէ ինքզինք եւ կամ վերակենդա-նացման համար պիտի ապրի տաժանակիր չրջան մը...

Ան ընդ-հանրապէս կը նախընտրէ երկրորդը, որ պիտի տեւէ հա-րիւր յիսուն օր: Ուրեմն, արծիւը կը թառի բարձր լեռան մը ստորոտը գտնուող ժայռի մը վրայ ու իր կտուցով կը սկսի հարուածներ տալ ժայռին, որպէսզի կեռացած եւ անպէտք դարձած կտուցը անջատուի իրմէ ու փրթի: Կրնա՞ք երեւակայել իր կրած տանջանքը:

Օրեր ամբողջ մեծ համբերութեամբ ան կը սպասէ, որպէսզի կազմուի նոր կտուց մը: Յետոյ, իր նոր կտու-ցով մէկիկ-մէկիկ կը քաշէ ու կը փրցնէ իր ճիրանները:


Շրջան մը վերջ, երբ նորակազմ ճիրաններ կ'ունենայ, անոնց շնորհիւ կը փետտէ իր փետուրները:

Հինգ ամիս վերջ ան այլեւս վերագտած կ'ըլլայ քսան տարեկանի իր ուժը: Հիմա շատ անօթի է վերածնող արծիւը, պէտք է որսի ելլէ առանց ժամանակ կորսնցնելու:

## ՈՒՐ ԿԵՐԹԱՅ ԱՐԵՒԸ

**Բ**ոլորս ցերեկը աւելի կը սի-րենք՝ քան գիշերը: Ցերեկը կրնանք խաղալ, դպրոց երթալ, դուրս ելլել, պտըտիլ եւ այլն:

Շատ կը սիրենք երբ պայծառ, արեւոտ օր կ'ըլլայ եւ արեւը կը շո-ղայ մեր վրայ: Բայց ամէն օր պահ կու գայ, երբ արեւը մայր կը մըտ-նէ, կը հեռանայ մեզմէ՝ իր տեղը գիջելով լուս-նին: Այդ ժամանակ մենք կը պատրաստուինք քնանալու: Իսկ ո՞ր կ'երթայ արեւը գիշերը:




քին կը կատարէ ամբող-ջական պտոյտ մը իր առանցքին շուրջ: Եւ այն-պէս մը կ'ըլլայ, որ երբ մեր մոլորակին մէկ մասը ուղղուած է դէպի արեւ, այդ մասը ցերեկ կ'ըլլայ, իսկ միւս մասը՝ գիշեր:



Իրականութեան մէջ արեւը տեղ մըն ալ չերթար: Պատճառը այն է, որ Երկիր մոլորակը միշտ շարժումի մէջ է եւ քսանչորս ժամուան ընթաց-

կայ նաեւ այլ պատ-ճառ մը, որ մեզ հեռու կը պահէ արե-ւու շողերէն: Ատիկա մշուշն է, երբ երկիրը կը պատէ ամպին բարակ շերտով եւ երկինքը մեզ շատ մօտիկ կը թուի:





# ԿԻԹԱՈՒ



**Կ**իթառը լարային երաժշտական գործիք մըն է, որ մեծ տարածում գտած է աշխարհի տարածքին: Ան կ'օգտագործուի իբրև ուղեկցող գործիք երաժշտական տարբեր ոճերու մէջ, ինչպէս օրինակ՝ պլուզ, քառնթրի, ռոք, Ֆլամենկո եւ այլն: Քսաներորդ դարուն ստեղծուեցաւ ելեկտրական կիթառը:



Կիթառ բառը յառաջացած է սանսկրիտ լեզուի «կուտուր» բառէն, որ կը նշանակէ չորս լարէ:

Առաջին կիթառները, որոնք գտնուած են պեղումներու ժամանակ, կը պատկանին Ն.Ք. երրորդ հազարամեակին: Միջնադարուն կիթառի զարգացման կեդրոնը Սպանիան էր, ուր ան կը ստանայ իր ներկայի տեսքը՝ կազմուած վեց լարէ: Տասնիններորդ դարուն, կիթառի վարպետ Անթոնիօ Թորրէս կիթառին կու տայ իր ներկայի ձևը: Այդ ձևով կիթառները այժմ կը կոչուին քլասիկ կիթառ:

# ՀԱՆԵԼՈՒԿ




Ո՞վ է, ի՞նչ է:  
Թուչուն մըն է  
բարձրաթուիչ,  
Կորակաուց եւ  
գիշատիչ:

Ուժեղ է եւ սրատես,  
Մագիլները՝ սուրերու պէս:  
(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 355-ի հանելուկին պատասխանն էր օդանաւ):

# ԲԱԼԵՆԻ

**Բ**ալենին (cerasus) վարդագգիներու ընտանիքի բոյս մըն է: Մեզի ծանօթ է բալենիի 150 տեսակ: Ան թուփ մըն է կամ ծառանրման բոյս մը՝ 2-7 մ. բարձութեամբ: Տերեւները հակթածեւ են, գոց կանաչ, ծաղիկները՝ երկսեռ, ճերմակ, երբեմն վարդագոյն:



Բալենիին պտուղները մանր են, բաց կամ գոց կարմիր, թթու կամ քաղցր, մէկ գնդաձեւ կորիզով:

Բալենին կ'օգտագործուի թարմ եւ մշակուած ձևով, անոյշի, չիրի, օղիի եւ գինիի պատրաստութեան համար: Ան կը դիմանայ ցուրտին եւ խոնաւութեան:





Էլի Հուլիշեան

## ՀԵՌԱՑԱԻ՝ Հ.Մ.Ը.Մ.ԷՆ...

Շարունակուած 37-րդ էջն

Հուսանկարելը իրեն համար սոսկ արհեստ մը չէր, այլ՝ նախասիրութիւն մը, տեսակ մը հաճոյք: Իր բառերն են՝ «Ես հազարաւոր նկարներ ունիմ Քուէյթի մարզական կեանքէն: Նոյնիսկ երբ դեռ Հ.Մ.Ը.Մ. չկար Քուէյթի մէջ, հայ երիտասարդներ Փութպոլի խումբ կազմած կը մրցէին հնդիկներու եւ անգլիացիներու դէմ: Ես ունիմ անոնց մեծաթիւ նկարները: Հ.Մ.Ը.Մ.ի պարագային, ահագին նկարներ եւ վիտէօերիզներ ունիմ Փութպոլի եւ պասքէթպոլի խումբերու մրցումներէն»:

«Էմմի»ին համար Հ.Մ.Ը.Մ.ը բարիք մըն էր, որմէ պէտք էր օգտուիլ գիտնալ: Ան ունէր միութենականութեան իրեն յատուկ ըմբռնումը՝ պարզ ու խորիմաստ. «Չի բաւեր գնդակ առնել եւ դաշտ իջնել, կարեւորը գիտնալն է, թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական ենք եւ ինչո՞վ կը զանազանուինք ուրիշներէն»:

Երկարամեայ իր ծառայութիւններուն առ ի դնահատանք, «Էմմի»ն 2000-ին կը պարգեւատրուէր Հ.Մ.Ը.Մ.ի «Մառայութեան» շքանշանով, միշտ մնալով համեստ ու խոնարհ ծառան այն մեծ միութեան, որմէ յաւերժ պիտի հեռանար Յ Մալիսին,

88 տարեկան հասակին, իբրեւ խենթ սիրահար մը, առանց երբեք կշտացած ըլլալու անկէ...

## ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած 7-րդ էջն

Ողջո՞յն միութեան, միութենականութեան:  
Ողջո՞յն Հ.Մ.Ը.Մ.ի փառաւոր անցեալին, ներկային ու մանաւանդ պայծա՛ռ, պայծա՛ռ եւ առնական վաղուան տեսիլքին:

«Բարձրացի՛ր-բարձրացուր»ին հաւատքով, կամքով ու նուիրումով, Հ.Մ.Ը.Մ.ի երթը պիտի շարունակուի:  
Կեցցէ՛ այս անգուղական միութիւնը ծնած հայութիւնը,  
Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը,  
Եւ յաւերժ ապրի մայրիներու երկիրը՝ Լիբանան հայրենիքը:

[www.homenetmen.org](http://www.homenetmen.org)


### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին մարզիչը:
2. Հայկական օփերա - Կաղզին:
3. Եւրոպական գետ - Արամբի - Տարտղներ:
4. Քրիստոսէ առաջ - Դիմանալ - Արեւելեան տիտղոս:
5. Ցերեկ օր - Սեզայի հիմնած ամսաթերթը՝ «... հայուհի»:
6. Սկեպտիկ - Անթուրենէն նուազէր:
7. Կրկնուած բաղաձայններ - Ֆրանսական քաղաք - Փշալից ընդարբեր բոյս - Նաեւ:
8. Նոյեմիի հարսերէն - Արական օտար անուն - Ծառի կոճղ:
9. Վախկոտ - Հին ձեւով՝ իգական «նա»:
10. Մակբայակերտ յետադաս մասնիկ:
11. Արմտիքի չափ - Կտակ:
12. Գնդակ - Այբուբենէն - Անձնական դերանուն:
13. Առաջին անջրպետագնացը - Ռուբէն Որբերեանի երկերէն:
14. Մոհամմէտի փեսան - Գոյանալ - Կեցի՛ր:
15. Ուղուկ - Դողղղալ - Սուտանի լիճերէն:
16. Մէկը - Դրկից տառեր - Ընդունակ:
17. «Նուէր» եւ «Ծաղկունք» երկերուն հեղինակը:
18. Այբուբենէն - Լիբանանահայ ճատրակի վարպետ - Յուցական ածական:
19. Խելայեղ - Մխիթարեան բազմավաստակ հայրերէն:
20. Կղպանքի ծակ - Հայաստանի քաղաքներէն - Սամարիոյ հիմնադիրը:


### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. «Ֆորմիլիա 1»-ի իտալացի մրցավարորդ - Մեծ եկեղեցի:
2. Սրունքի մեծ ոսկորը - Փտուլթիւն - Իրանահայ օրաթերթ - Պտուղի աղուամազ (հակ.):
3. Ամերիկեան պետութիւն - Իրերայաջորդ գիրեր - Գեղմ - Իմացականութիւն:
4. Կանացի կոշական բառ - Հռոմէական դիցուհի:
5. Մայր թագուհի - Արական անուն - Թուրիկի ծննդավայրը:
6. Ունկնդրելու համար պէտք է ընել - Ամենափայլուն - Շրջուած՝ ճպոտ:
7. Նմանապէս - Օտար՝ տիկնիկ - Յուցական ածական:
8. 650 - Օրաթերթ - Կրկնուած բաղաձայններ - Ստուգիլ:
9. Կռթնած - Եւրոպական հանրապետութիւն - Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին նախկին խմբապետը:
10. Եղեմի չորրորդ գետը - Խաչաղբօշ - Դնդեր:
11. Հեծանոց - Կռնակղ առ:
12. Ա.Մ.Ն.ի 47-րդ նահանգը - Յուցական ածական - Եւրոպական ինքնաշարժներու մակնիշ մը:
13. 1996-ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Փոքրացնող մասնիկ - Յասակաքար:
14. Այբուբենէն - Տառի մը անունը - Մարգարէ - Տարածքի միաւոր:
15. Ստակ - Զէնքի թիրախ - Աննշմարելի անձրեւ - Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաքը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 198 ԽԱՉՔԱՌԻ ԼՈՒՐԻՄԸ



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ  
ՀԵԾԵԼԱՆԻՈՐԴՆԵՐԸ  
ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ  
ՄԱՏՐԱՆ ԱՌՋԵԻ**



[www.Aztagdaily.com](http://www.Aztagdaily.com)

photo by Ashnag©